

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

թիվ 39

25 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ցանկերգը (Խմբագրական) Տ. Ա. — Միամիտի մը արկածները. «Օրհնուած Սեր». Չիֆթե-ՍԱ.
ՐԱՖ. — Լըռին պաշտօն (Բանաստեղծութիւն) Մ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ. — Բժշկական Գրոցիկ. Կ.
Տ. ԱԼԼԱՀՎԵՐՏԻ. — Աղբկան մը օրագրիւն Բաղրուած. ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ. — Ներկու
բարեկամները (Նորավայ) Մ. ԴԱԻԹԵԱՆ. — Զանազանք.

ԲՈՎԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերի տարեկան բաժանորդագրիւն է Կ. Պոլսոյ համար. Բաժնուն դր. 5.
Եւ գաւառներուն համար իրիւն դր. 4. Կանխիկ վճարելի: Արտասահման 12 Ժրանք կամ
5 րուպի: Բոլոր տարեկան ծախսը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրու
թիւն չընդունուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկէն: ՄԱՍԻՍ
հրատարակ կ'ըլլէ ամեն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քեր ստացած
են, պէտք է ինքեան իմացնեն Խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առար-
կութիւնները նկատողութեան չեն առնուիր: Եւ ինքեան իմացնեն Խմբագրութեան:

Չի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշնի պայ-
մաններով:

Զեմ-Բէ ԿԻ ՇԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

در علیاده غلطه (ماسيس) غرضه ادارى

ԽՍԵՆԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍ
4. Պոլիս, Լալարիա
Rédaction de la Revue MASSIS
Galata, Constantinople

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (ի վիճակում)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ.

ԳՈՒՐԾ ԼՈՒԻ ՏԸ ՊԱՎԻԷՈ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. ԸՆԿ. ընդդեմ հրդեհի եւ ծովային արկածներու (ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւն կը կատարուին լաւագոյն պայմաններով:


Սոյն ընկերութեանց Դրամաւորութունն է ի Կ. Պոլիս, Քոնսթ Լիօնէ

Ընդհ. եւ իրաւոր ներկայացուցիչ Թուրքիոյ

Տ. ՏԵՐԱՏԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52—53—54—55—56

2—10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, քայքայ էական կէտն է լաւ մեքենայ մը սունենայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, սափի ու սափի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը զանուին:

ՍԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ԲԵՐԱ

ԿԱԼԱԹԱ

ՊՈԼԻՍ

ՍԿԻՏՍՐ

1. Մեծ փողոց, Պոն Մաշէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Մէրայի Լիսէին դէմ
1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ
1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյաղլի, Թրամվէյի կայարանին դէմ, 13

Զարչը Պոլս, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք արհ.

կատարեալ երախաւորութիւն:

Մասնանկիւղեր զաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

2—10

ՀԱՅԹԱՅԹԻՉ
ՊԱՆԱՏԱՆ

2-10

Եթէ երախայ մը նիհարէ և չի գաւալիր նէ, անործակ չունի և կերածը կատարեալ չի մարսեր նէ, և ակույցները — որոնք չեն մեծնարկոր նէ — ոչ ընտկանայէն փառադետները կ'աւելցնեն թող իրեն տրուի:



SCOTT'S EMULSION.

Ասիկայ մանկանց համար անործելի կերակուր և դէղ մըն է, և երախայն զայն խմած ատեն վերջի աստիճանի ուրախութեան մէջ կ'ըլլայ: Սայրը շուտով կը տեսնէ թէ ինչպէս երախային բոլոր վիշտերը անմիջապէս կը դադարեն: Երախային թոր կեանքը բոլոր անկարգութիւնները, չնչնով մանկան արտերը առողջութեան և զուարթութեան փոխադրեցին: Երախայն միշտ պատրաստ է այս նոր (ուտելիք և) ըմպելիքին և անործակով կ'ընծա: Կրկնի գաւալիչ և պզտիկ ճերմակ ակույցները անանձ ցաւի և վիշտերու կ'ընկալեն երևանելով: Ընդօթի Բաղադրութիւնը երախայն առողջարար գործութիւնը և գաւալում կուտայ, մարսողութեան կ'օգնէ և մարմնոյ ընդհանուր զօրութիւնը կը պատճառէ:

ԸՍԿՕԹ ԲԵՂԵԹՐՈՒԹԻՒՆ

Բոլոր տղայոց Սիւրելին է և զանոնք շուտով վարդապղն երեւոյթի և զօրակոր և կատարեալ առողջութեան պատկերներու կը փոխէ: Ընդօթի Բաղադրութիւնը վրան այս նշանով վարդապղն փաթեթի մէջ ծալուած շիշերէ կը ծանցոնէ:

Չիշերու վրայ անոր ուղադրութիւնը ընէ պէտք է:

20

Բոլոր բեռնործները և բեռնաճանաչները իւր ծախսը:

ԳՈՐԾԱՐԱՆ

Գորգի մաքրութեան եւ նորոգութեան (Գրասենեակ՝ Մահմաւ — փաշա, Թարագճըրար, Մեծ Նար Սանի կից, Թ. 37)

Այս հանրածանոթ գործարանին մէջ կը սաքրուին աղտոտած եւ փոշոտ թէ՛ մետաքսէ եւ թէ՛ բուրգէ ամէն տեսակ ընտիր գորգեր, քիմիական դեղորեկից միջոցաւ, առանց որ եւ է արաւ կամ հեաք ձգելու: Ընդհանրապէս, բոլորովին նոր երեւոյթ մը կ'առնեն այս գործարանին մէջ մաքրուած գորգերը:

Ունի նաեւ առաւելութիւն մը նոր գորգերու վրայ, այն է թէ՛ այս գործարանին մէջ մաքրուած գորգերը զերծ կը մնան ցեցերէ (կիւղէ) կեր ըլլալէ:

Կը նորոգուին նաեւ օրեւէ կերպով վնասուած գորգեր:

Սոյն գործարանը կը առնանէ նաեւ պատրաստել նոր գորգեր, ինչ մեծութեամբ ու ճաշկով որ ուզուի:

Թանձնարարութիւնը պէտք է ուղարկել գրասենեակը:

Դիւրամաշկի պայմաններ:

1—10

ԱԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամեն ճեսակ բօնաֆիյի ապրանց

Մեծ—Շուկայ, Թիւրքմեններու դրան կից, Թ. 41—43

Նշանպէս, արանց եւ կանանց ճաշկով հովանոցներու վաճառատուն, Պալիս, Սուլթան—Համամ, Միտիլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ Թահաֆիլի վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յաւակ հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն ազնւութիւն, եւ դիւրամաշկի գիններու առաւելութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան:

Աղամ վարդեան մեծապէս գոթողացած է իր բաղամթիւ յաճախորդները: Կ'արժէ որ Շուկայ կառք ամէն ընտիր յոյսիլ անգամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հաշուաւ համար:

1—10

ՄԱՍԻՆ

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ




ՅԻՒ 39



25 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1904

ԳԱՆԳԱՏԻ ՅԱՆԿԵՐԳԸ



Աւետարեցի խմբագրութիւնը, չի բաւականանալով այն տարրալուծական քնննութեամբ որուն լուրջն անցուցած էր վերջերս մեր պարբերական թերթերը, որոնց մէջ պէտք եղած չափով «կրօնական» ու «գիտական» չէր գտնուիր,—բայց մը որուն հակադարձ թերեւս կը նշմարէ ընթերցողներու բաւական ստուար թիւ մը,—հիմակ ալ խօսքը կուտայ պատահական աշխատակիցներու որպէսզի անոնք ալ իրենց երեմիականները կարգան մեր լրագրական—գրականութեան «անկման» վրայ։ Այս անգամ, սակայն, մինակ չաբաթաթերթերը չեն՝ դատաւիտու մի առարկայ, այլ օրաթերթերն ալ, այսինքն բովանդակ թրքահայ լրագրութիւնը,—բաց ի՛րականաբար՝ Պօրտ ընկերութեան «օտկան» էն։

Այդ յօդուածագիրներէն մէկը, Պարտիզակի թիւնիներուն տակ յօրանջած պահուն, իր հանգիստի ժամերը լաւագոյն կերպով դարձածելու միջոցը համարեր է ինքն ալ իր կարգին ողբալու մեր մամուլին «խղճալի վիճակ»ը որու մասին կը գրէ լրջօրէն.— «ներկային մէջ ձեռքդ ա՛ռ օրաթերթերն ու չաբաթաթերթերը. անոնց մէջ պիտի գտնես, քիչ բացառութիւնով, անհատական հայրենիք, անձնական կիրքերու և անբարոյականութեան շուրջը դարձող խճճանքներ ու Զօլայական վրանբացութիւններ, որոնք՝ չինիչ յօդուածներ ըլլալէ չա՛տ հեռու հանրութեան թէ՛ մտաւորական և թէ՛ բարոյական անկմանը պատճառ կ'ըլլան»։—Ա՛խ, սա Զօլուն, եթէ գոյութիւն ունեցած չըլլար

կամ եթէ իր անունը ծանօթ չըլլար մեր մէջ անո՛նց մանաւանդ որոնք բնապաշտ վիպասանէն տող մը բան կարդացած չըլլալով՝ իրենց բերին ծամոց ըրած են Աստուծաւոր հոյակապ հեղինակին անունը, ինչի՛ վրայ պիտի հիմնէին այդ ողորմելիներն իրենց գտնադատները։ Կեանքին մէջ առաջին անգամ յօդուածով մը փայլիլ ուղողը նախ պիտի ինկարկէ Բարոյականութեան և յետոյ պիտի անիծէ Զօլան։ Այս երկու պայմանները կը բաւեն իրեն՝ ուղածին չափ էջեր լեցնելու, պարզելու համար հայ գրականութեան ալ գահատելի վիճակը։ Խօսքս՝ բուն իսկ մեր լրագրութեան մէջ առեն ատեն յայտնուած թեր ու դէմ կարծիքներուն վրայ չէ, որոնք գէթ գրական կանոնաւոր վիճաբանութեան մը ձեւը, ունին և բան մը կ'ըսեն միշտ ընթերցողին, այլ Աւետարեցի մէջ ստեղծուած հոսանքին վրայ, անձա՛ռ ու բռնադժօրիկ, որ միեւնոյն յանկերգը կը կրկնէ՝ տարբեր ձեւերու և ստորագրութիւններու տակ։ Եթէ այսպէս չըլլար, ի հարկէ չպիտի արժէր դրաւիլ Պարտիզակցի նամակագրի մը յօդուածովը որուն առաջին մասը նոյնքան խեղաթիւրում մըն է հայ թերթերու օգտակարութեանը ու չահեկանութեանը՝ որքան երկրորդ մասը պանծացումը Աւետարեցին։

Ո՛վ կրնայ արգիլել զինքը և իրենները՝ գովելու իրենց թերթը. բայց երբ գրող մը կեղծպարիտութիւնը առաջ կը տանի յայտարարելու աստիճան թէ մեր հրապարակագիրները «արհամարհանքով կը վերաբերուին Ս. Գրոց դէմ»—բան մը որ ո՛չ մէկ հայ գրողի

մտքէն անցած է որոնք՝ է՛ն մեծերէն մինչև խոնարհագոյնները՝ պատկառանքով կուտան Ս. Գրքին անունը, և չէ թէ միայն կրօնական տեսակէտով՝ այլ գրականութեան ալ գլուխ—գործոցը կը հռչակեն Աստուածա-
օրունքը, իրաւունք վունենանք հարցնելու թէ Աւետաբերի խմբագրութիւնը համամիտ է իր յօդուածագրին թէ այլապէս կը խորհի: Մենք մեր թերթիւուն, մեր գրուածքներուն մէջ գրած ենք երբեք բառ մը որ արհամարհան-
քի նմանի՝ Ս. Գրոց հանդէպ:

Թեթեւամտութիւնը, խեղճանքը ասանկ բաներ գրել ու ընթերցողներուն հաւատոյնն ուղեւն է, և ո՛չ թէ նորալէպ կամ սիրային գրուածք հրատարակելը: Խեղճ Գրիգանթէմ, որ ինքն ալ՝ Իգմիրի իր անկիւնէն՝ առաջ կը քշուի իբրեւ հայ լրագրութեան անկմանը նը-
պաստող տարր մը և որուն աննման ֆան-
թէզիները «Գրիգանթէմական ստորնաբանու-
թիւններ» կը յորջորջուին Պարտիզակցի յօդ-
ուածագրէն որ հայ գրականութեան վարկը բարձրացնելու գերբնական կոչումը ստացած
բոլոր կը կարծէ, իր միամիտ երեւակայու-
թեանը մէջ:

Մեր թերթիւուն և Աւետաբերի մէջ յաճախ վիճաբանութիւններ կ'ըլլան կրօնական հար-
ցերու վրայ, սա՛ տարբերութեամբ որ՝ մինչ
առաջինները խնդրոյ առարկայ եղած նիւթին
շուրջը միայն կը դառնան, վերջինը՝ բոլոր
հայ լրագիրները իրենց կոչումին գրեթէ ան-
համապատասխան ցցունելու ճիգ մը կը մատ-
նէ, ինչպէս վերեւ յիշուած յօդուածին մէջ
զոր հիւրընկալած է վերջին շաբթուան թիւը:
Թէ և աւելի բարեկրթութեամբ ու շրջահա-
յեցութեամբ գրուած՝ բայց դարձեալ նոյն
ոգին կը կրէր Աւետաբերի գլխաւոր խմբագ-
րին յուլիս 30ի թիւով մեզ հրամցուցած յօդ-
ուածը որուն ակնարկեցինք վերեւ «տարրա-
լուծական քննութիւն» բացատրութեամբ,
հետադադարութիւն մը, սակայն, որ շաբաթա-
թերթիւուն միակ եօթնեկի մը մէջ մէկ թի-
ւին վրայ կատարուած էր, ընդհանուր եզ-
րակացութիւններ հանելու համար: Մինչդեռ,
օրաթերթ մը կամ շաբաթաթերթ մը իր մէկ

տարեւրջանի նիւթերուն բովանդակութենէն
միայն կրնայ գնահատուիլ և կատարեալ գա-
ղափար մը տալ: Ասիկայ մեզմէ աղէկ գիտ-
նալու էր յարգելի խմբագիրը որ «գիտական
մեթոտով քննելու և լուսաբանելու» գրու-
թեան ջատագով կը կանգնի իրաւամբ:

Եւ քանի որ առիթը ներկայացաւ, ըսենք
մէկ անգամէն թէ Աւետաբերի այս կամ այն
խմբագրին, այս կամ աշխատակցին քննադա-
տութիւնները, մեր թերթիւուն նկատմամբ
առ հասարակ, իրենց չափազանցութեամբ
կը կորսնցնեն իրենց կարեւորութիւնը, եթէ
երբեք մանր մունր ճշգրտութիւններ ալ պա-
րունակէին, խոշորցնելով թերութիւնները ու
լուծեամբ անցնելով առաւելութիւնները,
Ոչ մէկ աշխատաւոր, մտաւորական ասպարէզին
մէջ, ինչպէս գեղարուեստականին, ճարտա-
րարուեստականին և այլն, կրնայ պարծիլ թէ
իր գործը կատարեալ է. ու նոյն իսկ, միև-
նոյն սահմանին վրայ գտնուողներուն կրնան
տարբերիլ իրարմէ. բայց ասկէց պէտք է
հետևեցնել թէ թերթ ես, անպէտ ես, յոռի
ես: Ինչ ձեռնհասութիւն ունի Աւետաբերի
խմբագրութիւնը դատաւոր կանչնելու իր
բոլոր պաշտօնակիցներուն գրչի աշխատան-
քին, հոգեւորականէն ու թարգմանածոյ գի-
տականներէն դուրս, — որոնց ամէնէն աւելի
տուած է ինքզինքը, — մատենագրականին,
գրականին ու բանաստեղծականին ալ:

Յետոյ, որովհետեւ նիւթական է ամէն
ձեռնարկութեանց յաղորդութեան զուպանակը,
Աւետաբերի խմբագրութիւնը զմեզ քննադա-
տած պահուն պէտք էր յիշէր որ իր կատա-
րած լրագրական գործը չի համապատասխա-
ներ իր վայելած նիւթական առաւելութիւն-
ներուն, ուսկից շատ աւելին սպասելու ի-
րաւունք ունին իր ընթերցողները, մինչդեռ
մեր թերթերը ճիշդ ներհակ վիճակի մը մէջ
կը գտնուին: Պարզ խօսքով, Պայպլ—Հաուսի
վերնայարկի օդասուն ու լուսաւոր սենեակ-
ներուն մէջ բազմող խմբագիրները միակ
զբաղում մը ունին, իրենց շաբաթաթերթին
մէջ մէյմէկ որոշ բաժին լեցնել, հեղինակե-
լով կամ թարգմանելով. տպագրական ծախ-
քի, թուղթի, թղթատարի, բաժանորդագ-

թուփեան, ծանուցման ո՛չ մէկ հոգ կը ծան-
րանայ իրենց վրայ. թերթը շատ սպառեր է
կամ քիչ, հաւանութիւն է կամ ոչ, զիրենք չզրա-
ղեցներ. աւելի պանքայի կամ վաճառատան
գրադրի դիրքը ունին՝ որոնց նիւթականը
կանոնաւոր կուտանի մը վրայ դրուած է,
Մերինները, կամ մենք, — հարկ է ըսել, — նիւ-
թականին ու խմբագրականին կրկնակ հոգե-
րովը ծանրաբեռնուած, չունենալով մեր դէմ
Պօտի ընկերութեան օսկեղինիկ հեռանկարը,
ո՛չ ալ լիառատ վարձատրութեանց քաջալե-
րանքը, շա՛տ աւելի եռանդով ու զգացու-
մով փարած ենք մեր աշխատութիւններուն
և անկեղծօրէն կրնանք ըսել թէ շա՛տ աւելի
պէսպիսութիւն, չանկանութիւն ու օգտա-
կարութիւն կընծայենք մեր բազմապահանջ
ընթերցողներուն: Գէթ մէկ անգամ, այն ալ
Աւեսաբերի հասցէին, թո՛ղ համեստութեան
դէմ չըլլայ այսքան մը ըսելը: Մեր ընթեր-
ցող հասարակութիւնը կրնայ ունենալ իր
գանգատները այս կամ այն կարգի յօդուած-
ներէն, թերութիւններ նշմարել մէկ կամ միւս
թերթին մէջ, բայց երբե՛ք այն ոճով ու այն
ոգիով չի յայտնել իր դիտողութիւնները՝
ինչպէս հաճոյք կըզգան ընելէ Աւեսաբերի
խմբագրութիւնը ու մէկ քանի յօդուածա-
գիրները: Վասն զի անիկայ, ընթերցող հա-
սարակութիւնը, հեռուէն կամ մօտէն աղէկ
գիտէ թափուած ճիգը, նուիրուած տենդա-
գին աշխատութիւնը, նիւթական անձկու-
թիւնները և մտաւորական հոգեբը՝ իրեն հա-
մար գրող հրապարակագրին ու գրագէտին:

Տ. Ա.

ԿԻԼԻԿԻՅՈՅ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը, անցեալ ուր-
բաթ օր, Ս. Պատրիարք Հօր հետ պատիւ
ունեցաւ Վեհ. Կայսեր ներկայանալու, և ե-
րախտագիտական ու հաւատարմական Ուղերձ
մը կարդալու, որուն բարեհաճեցաւ պատաս-
խանել Ն. Կ. Վեհափառութիւնը՝ իր բարձր
գոհունակութիւնը յայտնելով:

Կայս. ունկնդրութեան արժանանալէ ա-
ռաջ, Ս. Կաթողիկոսը արարողապետ փաշա-
լին ձեռքէն ընդունեց Ս. կարգի Օսմանիէ
պատուանշան զոր Վեհ. Կայսրը բարեհաճած էր

չնորհել Ն. Սրբազնութեան օր, այս բերկ-
րալի առթիւ, Երուսաղեմատան մէջ ամէն օր
կընդունի ծանօթ անձնաւորութեանց շնոր-
հաւորական այցելութիւնները ինչպէս նաև
խնդակցական հեռագիրներ Կիլիկիոյ բոլոր
թեմերէն որոնց եկեղեցիներուն մէջ հանդի-
սաւոր բարեմաղթութիւններ կատարուել են
Վեհ. Կայսեր արեւշատութեան համար,

ՎՍԵՄ. ԱՐԻՍ ԷՖԷՆՏԻ

Բերկրութեամբ կարդացինք Պաշտօնա-
կաններուն մէջ, թէ Վեհ. Կայսրը բարեհա-
ճած է Իւլայի Բ. աստիճան չնորհել՝ Ազգ.
Պատրիարքարանի աւագ գործակատար Վսեմ.
Արիս Էֆ. Ֆէսճեանի, որուն կը փութանք
ուղղել մեր շնորհաւորութիւնները՝ Կայսերա-
կան բարձր գնահատման արժանանալուն առ-
թիւ: Պատրիարքարանի համակրելի գործա-
կատարը, այդ կարեւոր պաշտօնին կոչուելէն
ի վեր, բոլոր իրեն հետ յարաբերութիւն ու-
նեցողներուն համարումը գրաւած է իր բա-
րեհամոյր բնաւորութեամբը ու գնահատելի
գործունէութեամբ եւ այս անգամ իրեն
եղած Կայս. չնորհին առթիւ՝ հինգշաբ-
թիէն ի վեր կընդունի Պատրիարքարանի
պաշտօնական մարմնոց, ինչպէս նաև լրագ-
րական ու անհատական շնորհաւորանքներ:

ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Մեր հաճակելի պաշտօնակիցը, Մանգու-
մեի Էֆեմար, այսօր կը հրատարակէ իր հա-
զարթուեակը և այս առթիւ պէսպիսութեամբ
լեցուն ճօն թիւ մը պիտի ընծայէ իր ընթեր-
ցողներուն, գրական խնջոյքով մը տօնելու
համար իր 1000րդ թիւը՝ բացի իրական
խնջոյքէ մը զոր սարքած է ի պատիւ թեր-
թին խմբագրական մարմնոյն և պաշտօնէու-
թեան: Մեր անկեղծ խնդակցութիւնները
կ'ուղղենք այս առթիւ Մանգումեի Տէր և
Տօրէն Յովհաննէս Էֆ. Ֆ. Գայսերեանի,
Ժրաջան խմբագրապետ Գասիմի և խմբագ-
րական մարմնոյն, մաղթելով որ շատ մը հա-
զարթուեակներ տօնելու բարեբաղդութիւնը
ունենան:

★ ★

Հաճոյքով կը ծանուցանենք նաև թէ
Բիւզանդիոն լրագիրը, երեքօրեայ դադարումէ
մը ետք, վերսկսաւ հրատարակուիլ բարեհաճ
արտօնութեամբ Տպագրական Տեսչութեան:

ՄԻԱՄԻՏԻ ՄԸ ԱՐԿԱԾՆԵՐԸ^(*)

ԺԲ.

ՕՐՇՆՈՒԱԾ ՍԷՐ



ԶԻՖԹԷ-ՍԱՐԱՅ

ՅՈՎ. ԴԱՅԱՆՃԵԱՆԻՆ

Աչքերովը աչքերուս խորը մխուած, ոտքին տակովը թեթեւօրէն կը շոյէ իմ ոտքիս երեսը և այդպէսով անուշ ու անդիմադրելի տաքութիւն մը կը փոխանցէ ինծի: Ամէն անգամ որ գրգռուած անդին կը նայիմ, ուժով մը կը կոխէ ոտքիս վրայ, ինչ որ կողտերուն վրայ սաստիկ ցաւ առաջ կը բերէ: Անգամ մը ձեռքը բռնելու փորձ մը ուղեցի ընել: Անմիջապէս փախցուց զայն և ա'լ գրպանէն դուրս չի հանեց: Բայց աչքը աչքէս չէր զատեր, խորհրդաւոր ու անառակ հուսանք մը անցընելով ինծի, ինչ որ կ'ապացուցանէր որ բոլորովին բուժուած չէի դեռ պահանջարտ լինելու թեւեւ: Ատեն մը կուգայ որ ա'լ չեմ գիմանար և ոտքի ելլալով վազեմ ինչ քովի նեղ անցքին մէջ կ'երթեւեկեմ երկար առան, պրըթօն օրիորդին հետապնդող ու հրաւիրող նայուածքներուն տակ: Անդիի բաժնեմասերուն, մէջ, հոս ու հոն քնացողներ, ծխողներ, ընթերցողներ: Երբոր Լիօն կը հասնինք, երկու հոգի կիջնան մեր առաջքի բաժնեմասէն և ես հոն անցնելով, հանգիստ կերպով կը տեղաւորուիմ՝ թեւերը կուրծքին վրայ ծալած ու քնացած, գորշ գոյն լաթ քաշալուսին մը հագած դեղին մազերով օրիորդի մը դիմացը որ մինակ ըլլալ կը թուի, և որուն ծունկերուն վրայ ինկած գոց աճէն դալ մը վրայ Պօլսական տպարանի մը վաճառանիչը կայ:

Հետեւեալ օրը, իրիկուան դէմ, չոգեւաւը կը բաժնուէր Ժօլիէթի քարափէն՝ ուրուն վրայ կը նշմարէի, առջի դիչերուն պրըթօնուհին որ հեռուն կը ժպտէր ինծի և ես անհուն գոհունակութիւն մը կ'իմանայի հետզհետէ աչքէ կորսնցնելով սիրային արկածներու յետին ու խուսափուկ այդ խեղճը:

(*) Շարունակութիւն Եւ վերջ:

որ այդ մոլորեցնող հողին վրայ կեցած, կարծես խորհրդանշանը կը դառնար, յոռի ճրգտումներու քայքայումին, այլանդակ բնաւորութեան փոփոխութեանը և հանդարտ ու պայծառ ապագայի մը վերածնունդին: Գանիցամաքը կը սուղուէր հեռուն, այնչափ կունենայի միտքս պաշտող մղձաւանջի մը փառաբանութիւն տպաւորութիւնը և արեւելքէն փչող մեղմ հով մը ծննդավայրի անուշ ու կարօտալի շունչովը կ'ողեւորէր թոքերս:

Հանդարտ օդով, հանգիստ ճամբորդութիւն մը ունեցայ այս անգամ մինչև Պոլիս, ինչ որ իր կարգին ուրիշ խորհրդանշան մը կուգար ըլլալ աչքիս, ապագայ կեանքիս նկատմամբ, ուր ա'լ բուռն փոթորիկներ պիտի չիգային աւրտրկել զայն: Այս անգամ խնայողութեան համար երկրորդով կը ճամբորդեիմ: Սեղանին նախագահող երկրորդ նաւապետին ու երկու սպաներէն անմիջապէս ետքը ես կուգամ, դէմն ունենալով առջի դիչերուն կառախուժքին մէջի խորտիչագեղ օրիորդը, որուն Պոլսեցի ըլլալը քիչ մը կասկածած Լի պոլսական տպագրութիւնով իր աճէնդայէն: Բայց ինչ ազգէ ըլլալը չեմ կրնար գուշակել, մանաւանդ որ մաքուր ու վարժ ֆրանսերէնով մը կը պատասխանէ նաւապետին ու միւս համազգեստաւոր պարոններուն, որոնց զուարթ խօսակցութեան ես ալ կը խառնուիմ, չափ չանցած, և ի վերջոյ գինիի գաւաթներու մէջ, հին բարեկամներ կը դառնանք ամէնքս ալ, ինչ որ անխուսափելի պայման է չոգեւաւի մէջ սահմանափակուած, ու արտաքին իրերէ, լուրերէ զրկուած ճամբորդներու համար: Ու երբ նաւապետը ու սպաները կը փութային իրենց գործին գլուխը, ինծի կիջնայ լնականաւոր չոգեւաւին վերնայարկը առաջնորդել դեռաւոր ու կեղանի օրիորդը, ուր խօսուրդաւոր կըսկսինք վեր վար ճեմել, որոյ գիծի մը վրայ:

Շոգեւաւային ճամբորդութեան մը առջի դիչերուն այդ տեսութիւնը յորդում մըն է հարցումներու ու շահագրգռական մտերմասացութիւններու որոնք իրենց decorum-ով ու իրենց մանրամասնութիւնով մինչև վերջ

անշնչելի կը մնան միտքիդ մէջ։ Ո՛հ, ինչ անակնկալներ կըսպասէին ինծի այդ իրիկունը։ Երբեք չեմ յիշեր այդչափ զարմացումէ զարմացում գլորած ըլլալ, մանաւանդ ամէն տեսակ արկածներով, չափազանցութիւններով blasé, բթացած ըլլալէս ի վեր։

Օրիորդը հայ էր։ Ո՛վ պիտի կրնար երբեք բացատրել ներուժ այն յուզումը որ ամբողջ էութիւնդ կը խողտացնէ, երբ տարիներով չի խօսած ու չի լսած մայրենի լեզուդ, զոր այնչափ կարօտացած էիր, մէկէն ի մէկ կը լսես գեղգեղաձայն գեղուհիի մը բերանէն։ Արդէն չէ՞ մի որ, լեզու մը իր գեղեցկութեանը ու ներդաշնակութեանը լրումին մէջ վայելելու համար, կնկան մը բերանէն իմանալու է։ Կիներն են որ գիտեն ամէնէն աւելի անարատ պահել ու հաճելի ընծայել լեզու մը։ Հաղիւ հազ, հեռուէ հեռու հարցումներ մը կը սպրդեցնեմ և անխառն խռովանքով կ'ունենդրեմ թովիչ այն հնչիւնին ու արտասանութեան որ ընկերուհիիս պաշտելի շրթունքէն դուրս կուգայ, և երաժշտութեան մը պէս փափկաձայն իր ելեւէջներով կը յուզէ, կը ցնցէ, կը խայտացնէ, գերի կը վարէ հոգիս։

Օրիորդը կը ճանչնայ զիս։ Իր մօրեղբայրը, ռուսահայ վարդապետ մը, շատոնց ի վեր Պոլիս հաստատուած, խաճաճաբը եղած է իմ մօրեղբօրս, որուն ինչ աստիճան աւանդասէր ու ջերմեռանդ մէկը եղած ըլլալը գաղտնիք մը չէ արդէն։ Այդ վարդապետը որուն մէկ ոտքը մեր տունն էր, մօրեղբօրս ողջութեանը ժամանակ, իմ աւագանի կընքահայրս եղած է միեւնոյն ատեն։ Բայց ես բոլորովին կ'անգիտանայի անոր քոյր մը ու քոյր աղջիկ ունենալը։ Ինծի չատ կը սիրէր ան, և նոյնիսկ մօրեղբօրս մեռնելէն վերջն ալ երբեմն երբեմն կը հանդիպէր մեր տունը ինչպէս կիմանայի ի՞նչի գրուած նամակներէն և տեղեկութիւն կուղէր վրաս, հարցնելով միշտ, իր քսան տարուան բանաձեւովը։

— Ի՞նչպէս է իմ սիրական սանը։

Վերջերը միայն, քիչ մը արամելով ու սրտմտելով իմ վրայ առած գէշ տեղեկութիւններէն, փոխած էր իր յաւիտենական

յանկերդը և կէս բարկացած, կէս զուարթաբան, — ինչ որ իր բնութեան խորը ու խմորն էր, — կը հարցնէր։

— Ի՞նչ կրնէ իմ սիրական սրիկան։

Առաջ առաջ վայրկեան մը խորհեցայ օրիորդէն ծածկել նորագոյն անցեալս ու աւելի նպաստաւոր գոյներու տակ ներկայացնել ինքզինքս։ Ինչու որ նախ, ըրածներէս ես իսկ ամօթ կըզգայի փոխանակ հպարտութիւն զգալու ինչպէս առաջները, և յետոյ անորոշ բնադրում մը կը մղէր զիս հաւատալու որ անիկա մինչև հիմա իմ ճանչցած կիներուս չէր նմաներ և յարգանքով պէտք էի վերաբերուիլ անոր մէկէ աւելի առաքինական բարեմասնութիւններուն հանդէպ։ Բայց ան ամէն բան գիտէր։ Ոչ միայն թուրքերան վարդապետը իր տրտմութիւնը բացատրելու համար օրը օրին միամտօրէն կը պատմէր անոր վրայով առած աննպաստ տեղեկութիւնները, այլ ազգական ու մտերիմ ըլլալով Պոլսական ծանօթ գրողի մը, — որուն ես՝ կէտ առ կէտ կը հաղորդէի սիրային արկածներուն մանրամասնութիւնները, ապագայ վէպի մը նիւթը հայթայթելու համար, ինչպէս խօստացած էի, — օգտուած էր անոր անգաղտնապահութենէն և զիս à fond կը ճանչնար։ Բայց կարծես ատոր համար ա՛լ աւելի ներողամիտ ու համակրական կը դառնար ինծի նկատմամբ, ինչ որ ա՛խտուն դոճուխակութիւնով կը համակէր զիս։ Արդէն ընդունուած ճշմարտութիւն մըն է որ կրակոտ կիսաջր ջրկները աւելի քաջողական հանգամանք կուենան դեռաւոր ու առաքինի աղջիկներուն համար, քան սարսափ ու կոտորուի պարոններ՝ որոնք կիներ իրենց երազներուն մէջ միայն կը ճանչնան։

Օրիորդը գործով Բարիզ եկած էր։ Ահա ինչ որ ամէնէն աւելի անհաւատալի ու անօրինակ կը թուէր ինծի պէս զբօսասէր, արկածախնդիր, յափրացած պարապորդի մը։ Դեռատի հայ աղջիկ մը որ ոչ միայն կ'աշխատի, այլ նաեւ օտար երկիրներ կերթոյ կուգայ գործով, ասիկա կ'անցնէր միտքիս սահմաններէն։ Այլ տեսնալու էր օրիորդին զուարճութիւնը ու հեգնական ակնարկու-

թիւները իմ ապշումներու հանդէպ: Ատով հանդերձ, ժամանակ գտաւ իր ընտանեկան կեանքին պատմութիւնը ընելու ինծի, ճշու ուղղուն խօսութեանքի մը մէջ: Վարդապետը, հսկառակ շատ տարուան հոս գաղթած ըլլալուն, շատ ջնջին ամսականով մը քարոզիչ էր, աղքատիկ թաղի մը մէջ: Իր քոյրը և քեռայրը, — ճերմակի նախկին վաճառական մը՝ Պոլսեցի, — որ վերջէն ինկած էր, մեռած էին, մանչ մը ու աղջիկ մը ձգելով: Մանչը, մօրեղբայրը գէշ աղէկ մեծցուցած էր, և հիմա Բարիզ, բժշկութեան ուսանող էր, բարեսէր հարուստի մը պաշտպանութեան շնորհիւ: Աղջիկը, Հայկանուշ, որ դեղբուհի էր, աղջիկներու արուեստանոցի մը նախկին խնամակալուհիներէն մէկէն: Հոն սորված էր ան, ձեռագործի, ձեռագիրութեան բոլոր նրբութիւնները ու գաղտնիքները, որոնց մէջ մեծ համբաւ ունէր արդէն իր մայրագիրը:

Տասնըվեց տարեկան եղած ատեն, Հայկանուշ ուղեց ալ քեռ չըլլալ իր բարերարութիւն վրայ, որ արդէն այրիացած, հիմա չունէր իր առջի դրամական դիւրակեցիկ կացութիւնը: Ուստի զօրաւոր յանձնարարականով մը մտաւ Բերայի նորաձեւութիւններու քառաջնակարգ վաճառատուն մը: Իր պետերը, ֆրանսացի էրիկ-էկիկ մը, վերջին աստիճան գոհ մնացած էին անոր ժիր ու անուշիկութեան, արուեստգիտութենէն ու արթնամտութենէն, և անկէ ի վեր անցած չորս տարիներուն մէջ միշտ առաջանալով հասած էր *première*ի մը դիրքին: Եւ վերջին ձմեռը Բարիզ խրկած էին զայն, ամէնէն վերջին նորաձեւութիւնները ու լաւագոյն ապրանքները ինք իր ձեռքովը ընտրելու, գնելու ու խրկելու համար: Հոն կ'ապրէր, եղբօրը հետ, ինչ որ կրկնապէս հաճելի էր իրեն: Բայց դժբաղդաբար իր ամուսինին յանկարծական մահուանը վրայ, *patronne* ետ կանչած էր զինքը, հաւանօրէն գործը երկար տոնէն շարունակելու գիտում չունենալով:

Դիչերը շատ ուշ էր և չոգենաւին վերնայարկը մարդ մնացած չէր, երբ մենք ալ

վար իջանք ու բաժնուեցանք: Շատ խռով քուն մը ունեցայ որուն գլխաւոր պատճառը տեղին նեղութենէն ու անհանգստութենէն ինչպէս նաեւ նոր բարեկամուհիի պատմութիւններէն ու անակնկալներէն աւելի, անոր անհունապէս անուշ աչքերուն ցոլքը ու չքեղ շրթունքներէն դուրս եկած գրուիչ ձայնին արձագանգն էին:

Հետեւեալ առտուն կանուխ նախաճաշը ըրած ու վեր ելած էր արդէն Օրիորդ Հայկանուշ, իր առտուն կանուխ գործին գլուխը անցնող աշխատաւորուհիի սովորութիւնով, մինչդեռ Բարիզէ դարձող որ և է հայ հանրմը, հազիւ կէսօրին անկողինէն ելլալը, աշխուականութեան ու եւրոպականացումի վերջին բառը պիտի նկատէր: Նախաճաշը ըրած ատենս կը խորհէի այդ համեստ՝ համարձակ միանգամայն աղջկան վրայ որ հայ աղջիկներու վրայ ընկալեալ դաղափարներս վերի վայր կը չըջէր: Ինծի անսակ կուգար որ հայ աղջիկներու կեանքի պայմանները դաստիարակութեան յաւիտենական հարցը, բնաւորութիւնները, վերջապէս ամէն բան կերպարանափոխ եղած էին իմ հեռացած ատենէս ի վեր որ, ինչպէս ըսի, քսան տարուան չափ հեռաւոր եղած ըլլալու տպաւորութիւնը կընէր վրաս, այնչափ արկածալի ու մրկոտ օրերէ ետքը:

Այդ օրը ամբողջ եւրոպեան կեանքին ու գրականութեան, Պոլսի ու հայ գրողներու վրայ խօսելով անցուցինք մէկտեղ, ինչու որ Օրիորդ Հայկանուշ Կոնստանտնուպոլսէ դադումներուն մէջ ատեն ունեցած էր հետաքրքրուելու ու լայն գաղափարներ կազմելու բոլոր ատոնց վրայ, որուն մէջ քիչ բաժին չունէր Պոլսեցի ծանօթ այն գրողը, որուն վրայ խօսեցայ քիչ մը վերը և որ իր հեռուէն ազդականն էր: Հիմա աւելի ուշադրութիւնով կը նայիմ իրեն և համակրութիւնս կըզգամ որ կ'աւելնայ իր բաղմամբ բարեմասնութիւններուն նկատմամբ: Միշտ հասակ մը ունի ու քիչ մը լայնի կազմ՝ որ առողջութիւն կը բուրէ և որ սակայն չի դադրիր բարեձեւ ըլլալէ, շնորհիւ իր շատ ճկուն շարժեւծեւերուն: Զօրս իր միշտ ստի

վրայ ու մէկ թելի վրայ եղող աշխատաւորուհիի վիճակին կը պարտի: Հակառակ նորաձեւութիւններու վարպետ մը ըլլալով ն, շատ պարզ հագուած է, որ ինքնին հմայք մը ու հեգնական բան մը ունի բաղդատաբար իր պոճուճապատանքի պէս պերճօրէն հագուածեցած փորթամուկներուն: Ան՝ ամէն ձեռարուեստի ու նորաձեւութեան նուիրուած օրիորդներուն պէս գիտէ դնել իր վրայ ջրն՝ ջին չգիտեմ ինչ մը, որ զինքը հեռուէն զուէազանել կուտայ իր քովի շատ մը ուռուցիկ ու պոռոտ արդուզարդներէն: Վառ ցոլքերով դեղին մագեր՝ միակ գոյնը զոր տեւական կերպով կրնամ սիրել մագերուն մէջ, խիստ փափուկ մորթ մը որուն վրայ անուշ վարդգոյն մը կը ծածանի, խոշոր խափուկ աչքեր, բուղի թարթիչներու տոգոյն ըստուերին մէջը պարուրուած, ու պզտիկ դիւրաշարժ մատներ, կը բաւեն կողմելու համար, պարզ ու առոյգ դեղեցկութիւն մը որ ինծի համար կրնկսէր յանկուցիչէն աւելի բան մը ըլլալ:

Շողենաւին մէջ մենէ զատ ուրիշ հայ չիկար և մենք ալ չէինք սիրէր արդէն յարաբերութիւն հաստատել միւս ուղեկիցներուն հետ որոնց մեծ մասը ֆրանսացի վարդապետներ ու մարապետներ էին: Ասոր շնորհիւ ալ աւելի մեկուսացած կ'ապրէինք, ինչ որ մեր ուզած բանն էր, և միասին սնցուած այդ ութը օրերուն մէջ շատ աւելի իրար կը ճանչնայինք ու շատ աւելի բան խօսած էինք իրարու քան շատ տարիներու բարեկամներ: Յորեկին վարի սալօնը, իրիկուան վերնաթաղան էինք: Դիչերը զէկին կողմը, կիսաշրջանաձև բարձրաւանդակին վրայ, բարամբունքին կրթնած կ'երազէինք լոխ, դիտելով արծաթէ փրփուրներու լաշն ահօսը զոր շողենաւը կը պեղէր ծովերու հէք մենաւորին լուսինին, —սիւսած լուսեղէն կապերտին վրայ:

Երբոր Պոլիս հասայ, գարունը, Վոսփորի դրախտային եղանակը ծնծնալու վրայ էր և ես՝ զգուած մեծ քաղաքներէ ու չուղելով Բերայի աղմուկին ու աղտոտութեան մէջ բնակիլ, կանուխէն Վերին Վոսփոր փոխադ-

րուեցայ, քիչ մըն ալ առողջութեանս համար: Դիտէի թէ հիմա, ամառ ձմեռ հոն կը բնակէր Օր. Կոհակեանի մայրագիրը, որուն կուգար ան ամէն շաբաթ իրիկուն, շաբթուան միւս գիշերները, գործին պատճառով ստիպուած ըլլալով իր տիրուհիին տունը մնալ: Ալ հիմա, ամէն շաբաթ օր, մեծ անհամբերութիւնով ու սրտատրոփ կը սպասէի անոր գալուն, քաղցր ժամանցներով լեցուն ամբողջ կիրակի մը ապրելու համար միասին: Ակներեւ էր որ ան ալ ոչ ուռաղ սրտագին եռանդով կը փութար մեր շաբաթական հանգիստներուն որոնք գրեթէ սիրային ժամադրութիւններ էին: Բայց ամէն անգամուն ալ արժանապատուութեան վիրաւորանք մը կուենայի տեսնալով, անոր՝ գործի մէջ ես փած աղջկան ոգեւորութիւնը ու երթեւեկը և իմ պարաս պարզ ու վիճակ աւելի ծանր կը ճնշէր վրաս:

Շատ անգամ իր գործին վրայ խօսելու կը մղէի զինքը: Տիրուհին կը մտադրէր վերջնական հաշուեյարդարութեան մը ձեռնարկել և քիչ ստենէն գործը գոցել բոլորովին կամ փոխանցել ուրիշին: Հակառակ իր սովորական զուարթութեանը, Օրիորդ Հայկանուչի բացգոյն աչքերուն առջեւէն սնատուգութեան մութ ամպ մը կ'անցնէր. նախ որովհետեւ շատ կը սիրէր իր տիրուհին զոր պիտի կորսնցնէր քիչ ատենէն, երկրորդ՝ որովհետեւ նոր տէրերու ծառայել պէտք պիտի ըլլար, որոնց բնաւորութիւնը կրնար չի յարմարիլ իրենին և այն ատեն պիտի ստիպուէր զըլխուն ճարը նայիլ: Յետոյ, ձեռքի լաշն շարժումներով, կը սիրէր վայրկեանի մը համար իրականութիւն տալ իր երազներուն և առանց մասնաւոր *arrière-pensée*ի կը բացատրէր թէ ինչե՛ր կարելի էր ընել, երբ ինք ըլլար վաճառատունին նոր տէրը: Զէր կասկածեր բնաւ որ իր այդ գաղափարը նմանօրինակ մտածումի կը համապատասխանէր մէջս: Եւ օր մըն ալ երբ ան նորէն կը խորհէր ու կը խօսէր այդպէս, *carrément* առաջարկեցի իրեն հետ ընկերութիւն մը կաղմելով վրանիս առնել այդ մեծ ու առաջնակարգ վաճառատան յաջորդութիւնը որ չնոր-

հիւ իր փորձառութեան, ծանօթութիւններուն, ու մեր միացեալ ջանքերուն՝ կրնար խիստ արդիւնաբեր ըլլալ: Ան՝ նախ կարմրեցաւ, չփոթեցաւ, կակաղեց թէ ինք այդ նպատակով չէր որ կը պարզէր իր երազները, այլ եղբօր մը ականջին փափսացուած մտերմասացութիւններ էին սնոնք ընկ, և երբեք պիտի չընդունէր, պիտի չուզէր վտանգել ուրիշին դրամը: Ինքզինքը նայուածքներէ հեռու, ապահով կարծող կնկան մը պէս որ մերկացած ատեն մէկէն ի մէկ կը բռնուի, կ'ամէնար ան, մինչև իր անուրջներուն թաքուն ալքը վերուծած ու ինծի ցուցադրած ըլլալուն համար և կ'ըմբոստանար իմ կրկին թախանձանքներուն ու ատիպումներուն դէմ: Եւ ապահով եմ որ եթէ այդ զարմանալի աղջկան սիրտին մէջ, ինծի նկատմամբ բարեկամական կապէ տարբեր զգացում մը չի գտնուէր, այսօր կազմուած պիտի չըլլար Տոմմիկ. Կոմակ եւ քնկ. վաճառատունը, Բերայի հինաւուրց ու նշանաւոր *raison sociale* մը առնթեր, իբր *successeurs*:

Ես, իմ մնացած բովանդակ ստացուածքըս, իբր յիսուն հազար ֆրանք, դրած էի հոն: Նախկին տիրուհին՝ որուն աւելի չահաւոր կուգար այս կարգադրութիւնը Պոլիսէն մեկնելէն առաջ, շատ մը նուէրներէ զատ իբր բացառիկ շնորհ իր նախկին *première*ին զոր իր զաւակին պէս կը սիրէր, նոյնչափ գումար մը կը ձգէր, տարուէ տարի մասնաւոր ձևերներով ետ տրուելու պայմանով: Վաճառահոսն բարի անունը, լաւ *clientèle* մը և նոր տիրուհիին աչալըջութեան համբաւը մեզի կը քաշէին շատ մը տրամադրելի վարկեր, լաւ պայմաններով: Գործերնիս կարգին էր: Եւ ես կեանքիս մէջ առաջին անգամը ըլլալով ամէն օր կիջնայի գործի ուր նոր հրապոյրներ կը գտնայի և Օր. Հայկանուշ ալ իր կարգին նոր կարողութիւններ կը գտնար մէջս:

Եւ օր մըն ալ, շատ բնական բանի մը պէս ձեռք ձեռքի տուինք, ինչպէս մագնիսը ու պողպատը իրարու կը մղուին, և քահանայէն խնդրեցինք որ մեր սէրը օրհնէ: Օհ, տեսնալու էր ուրախութիւնը ծերունի մեր

վարդանդեալին որ հիմա մեր նոր կազմած տունին նահապետն էր և որ մէկ հարուածով կը տեսնար, իր մէկէ աւելի բաղձանքներուն իրագործումը: Մեր հարսնիքին պարզ հանդէսին օրը, սեղանին ներկայ էին քանի մը մտերիմներ, ինչպէս խնդապատար հայրս, նոր հարսին բարի մայրագիրը, նախկին *patron* ըր քիչ օրէն կը մեկնէր իր ծննդավայրը և Պոլսեցի ծանօթ այն գրողը՝ որուն հանդիպեցայ անգամ մը Եւրոպա գոցած ատենս և որ վէպ մը ու դաս մը կը յուսայ հանել իմ արկածներէս, և ուրիշ մէկ քանի մտերիմ բարեկամներ: Գինիի դաւաթին առջեւ, պատկառելի եկեղեցականը փղձկած, բաժակաճառի պէս բան մը խօսեցաւ, խրատներով լեցուն, որուն վերջին խօսքերը միայն կը յիշեմ, այնչափ յուզուած էի այն պահուն:

— Ուրախ եմ, սիրական սանս, որ վերջին տարիքիս կրկնապէս խնդացուցիր զիս: Աստուած ալ քեզի խնդացնէ: Իրաւ է որ երիտասարդական անխոհեմութիւններ ունեցար, բայց բոլորովին չի փճացած՝ գիտար ուղիղ ճամբուն գալ, — երանի թէ ուրիշներն ալ քեզի պէս ընէին, — աշխատութեան ու պարկեշտութեան յարկ ու յարատեւել, ինչքերդ ու ջանքերդ միացնելով ժրպան աղջկան մը միտքի ու մատներու կարողութեան որ քու նոր տունիդ անկիւնաքարը պիտի ըլլայ: Ուրախ եմ յայտարարելու որ քու կինդ, աղքատութեան մէջ ետիւ, աշխատութեան դպրոցին մէջ դաստիարակուած ու ազնիւ սիրով մը սրբացած, տիպարը պիտի ըլլայ ապագայի հայ կնկան, այնպէս ինչպէս որ մենք կը ցանկանք որ ըլլայ ան: Ան չի պիտի ըլլայ հին հայ կինը որ անգործ, բանբասելով կ'անցընէր իր ժամանակը, կամ մաքրութեան պատրուակին տակ տախտակ շփելէ ուրիշ գործ չէր գիտէր և կամ ինչպէս վերջերս այնքան ճշգրտէն կը նկարագրէր տաղանդաւոր գրագիտուհի մը, ամբողջ օրեր բաղնիքը կանցընէր կէս թմրած վիճակի մէջ: Ոչ ալ պիտի ըլլայ լրագիրներու մէջ «փոխան մէկ ոսկիի» մեծագովուած այն նոր հարսերէն որոնք «բարձր դաստիարակութիւն մը առած, փայլուն ձիրքերով օժտուած, հայ


իդական սեռին պատիւ բերող անդամներն են» . և որոնք կատարեալ անամէջներ են, կեղծ նրբացածներ, տնաւերներ : Բու կինդ աշխատող կինը պիտի ըլլայ և այդ կը բաւէ, որովհետեւ աշխատութիւնը մայրն է ամէն առաքինութիւններու ու ամէն բարիքներու : Թէ՛ տունին մէջ, թէ՛ դործի ատեն ձեր աշխատութեան ու յոգնութեան, ինչպէս նաեւ վայելքի ու հանգիստի հաւասար բաժինները պիտի ունենաք և պիտի տեսնաք որ ձեր միացեալ ջանքերը պիտի արդիւնաւորուին և յաջողութիւնը ու օրհնութիւնը անպակաս պիտի ըլլան ձեր յարկէն» :

Յ. Գ. — Անկէց ի վեր երեք ամիս անցած է և վերջին պահուն ուրախ եմ կարենալ ձեզ աւետելու որ ապագայի Տոհմիկներուն անդրանիկը, մեր երջանիկ սիրոյն առաջին պտուղը, արդէն իսկ կը խոստանայ պսակել մեր ակնկալութիւնները . ուրկէ կերեւայ թէ Աստուած ալ հաճած է օրհնել մեր առողջ ու պարկեշտ սէրը, պտղաբերելով, հետեւաբար եւ յանէրժացնելով զայն :

(ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏՈՀՄԻԿ)

ՎԵՐՋ

ԼԵՌՆ ՊԱՇՏՈՒՄ



Երբ թարմ էջեր կը չափերաւորին սրբոյս լայն
Մատենին մէջ ամէն օր,
Ու ցընդա՛ծ են ալ հին յուշերն որ կուլան
Եւ անոնց տեղ նորանոր
Խընդութեանց յորդ տարափին տակ ծաղկասփիւռ
Սիրոյ յոյսեր կը փըթթին,
Այս Տօնոյթին մէջ իմ հոգիս վարդ փըրփուր
Կը ցանցընէ իր չորս դին :

Ըզմայլանքի, պըշնումի սուղ րոպէներ՝
Երբ խոնջ նայուածքս է՛ յառած
Վերադ, ո՛ր կին, — համակ լոյս, խունկ ու եթեր՝
Անո՛ր համար առեղծուած —
Երբ ծոյլ ու մեղկ լըքումիդ մէջ աննըման
Կարապի ձիւն վըղիդ շուրջ
Մազերուդ պերճ կոհակումին անպայման
Կը հետեւիմ անշըշունչ . . .

Ու մեղսակից բուրումներն երբ ծաւալին
Չարդախուցէդ մըտերիմ . . .
Ահ չեմ ուզեր խորհիլ մըսի հեշտանքին՝
Իմ պաշտումիս մէջ լըռին . . . :
Զի հըպումէն վերջ՝ մեղանչումն է՛ ալ պիղծ
Ու նիւթացած վայելքին .
Եւ ես, ո՛ր կին, կ'ուզեմ քանդել ամէ՛ն իղձ
Մէջն իմ խորան — հոգիին . . . :

. . . Բայց, ծընրադիր, արձանացած, թո՛ղ որ գէթ
Պըշնում հոգւով՝ Մատոնի
Պատկերիդ դէմ, հեռի՛ քենէ ու գըրկէդ . . .
— Փորձութիւնէդ սատանի . . . :

ԲԺՇԿԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԺԱՆՏԱՏԵՆԴԻՆ ԴԷՄ

Բարձրագոյն արտօնութեամբ նախորդ չարթու քանի մը ընկերներով Նյան Թայիի Մանրէաբանական Աշխատանոցը (Institut bactériologique) գացինք^(*) :

Շիտակ աշխատութեան լայնատարած սրահը ուղղուեցանք՝ որուն ամէն կողմերը գործասեղաններ կային մանրադիտակով, դեղերով, դործիններով ևլն. ևլն :

Ներքին վերատեսուէր, գնդապետ Տօքթ. Ֆայիք պէյ մեզ սիրալիւր ընդունելութիւն մը ընելէն վերջը, ժանտատենդի (թիֆո) մանրէաները մեր իսկ ձեռքով գունաւորել տուաւ որ հազիւ 2—3 ժամ տեւեց : Քիչ վերջը հասաւ Աշխատանոցին ընդհանուր Տնօրէն Տօքթ. Ռէմիլիփէ որ շատ գոհ մնաց մեր աշխատութեան և մէկերնուս առաջարկին վրայ պատրաստակամութիւն յայտնեց ժանտատենդի դէմ վերջերս գտնուած չիճուկի վրայ ծանօթութիւններ տալ :

Տեսնելու էր համակրելի բրօֆէսէօրը իր այդ դասախօսութեան կամ աւելի՝ բժշկական ասուլիսին մէջ :

Ամենքս ալ հիացած մնացինք չիտակը :

Իր արտակարգ սուր իմացականութիւնը, խօսելու բնական դիւրութիւնը, ուսումնասէր, պատճառաւորելի, հետաքննին միտքը, ուղիղ դատողութիւնը, անվրէպ տրամախօհութիւնը իր բրօֆէսէօրական այդ մեծ ասպարէզին մէջ գնահատելի էին :

Ժանտատենդի ծագումին, պատճառներուն, խիտանիչներուն և այլոց վրայ մաքո՞ր փրանսերէնով մը խօսելէն վերջը, ժանտատենդին չիճուկին վրայ անդրադարձաւ որուն մէկէ աւելի կարեւոր կէտերը նօթագրած ըլլալով՝ զանոնք Մասիսի ընթերցողներուն կը ներկայացնեմ :

(*) Մ. Խ. — Յօդուածագիրը՝ Կայս. Բժշկական Վարժարանին բարձրագոյն կարգի ուսանող է :

Թէ ի՞նչ է հակաժանտատային չիճուկը և ի՞նչ բանի մէջ կը կայանայ :

Առաջին անգամ ըլլալով Տօքթ. Շանթ. մէսի կողմէ պատրաստուած այդ հակաժանտատենդային չիճուկը ճիշդ հակակեղծմաշկային չիճուկին պէս կըստացուի : Ժանտատենդի մանրէին (էպէրթի մանրէ) ժահրը — toxine, հետզհետէ աւելի զօրաւոր չափերով, ճիւղներարկած և անոնց մարմնոյն մէջ immuns — corps կամ anti — corpsեր առաջ բերելով զանոնք (immunisé) խիտազերծ ընելէ վերջ անոնց արեան չիճուկը (sérum) առած է :

Շանթմէս՝ պատուաստային չափերուն աստիճանաւորումը ամենամեծ զգուշութիւնով ըրած է : Եթէ քիչ մը արագութեամբ կատարուի, և տկար չափէն չուտով անցնուի զօրաւոր չափին, առանց արդիւնքի մը ակահատես ըլլալու, ճին քանի մը օրուան մէջ կը մեռնի : Այս պարագան նոյն իսկ Շանթ. մէսի ալ քանիցս պատահած է և ճիշդ այդ պատճառով խիստ նշատուէրներ կուտայ զգուշութիւն ընելու :

Շատ ժամանակ անցնելէ և շատ մը գայթուղներէ վերջ միայն կարելի եղած է պատուաստել անասունները և առնել անոնց չիճուկները, այնպէս որ ժանտատենդէ վարակուած մարդուն մօրթին տակ Բրավադի գրեխով մը ներարկուելէ վերջ՝ գործոն տարր մը ըլլան պաշտպանութեան և ժանտատենդային ժահրին բնաջինջ ըլլալուն :

Ախտազերծուած ճիւղն այս չիճուկը Գ. Շանթմէս նախաբաղուկի մօրթին տակ կը ներարկէ տասներկու խորանարդ սանդիմէթր քանակութեամբ, եթէ ենթական զօրաւոր է ու միանգամայն չափահաս : Ներարկումէն անմիջապէս վերջ, բան մը չի պատահիր, միայն 4—5 ժամ վերջ թեթեւ ջերմ մը կուգայ, բայց ետքը ութը տասը օրուան մէջ տաքութիւնը կ'իջնէ հետզհետէ :

Եթէ մինչև այն ատեն ջերմը կատարելապէս չ'անհետի և ալ աւելի բարձրանալ սկսի ամֆիպոլներով, կը հասկցուի թէ՝ ներարկուած չիճուկը մեծ մասամբ դուրս վազած է, հետեւապէս պէտք է՝ մանրէներու նոր աստիճան արգիլելու համար՝ երկրորդ ներարկում

մը կատարել հինգ կամ տասը սանդիմէթր խորանարդ չափով, ջերմին սաստկութեանը համեմատ:

Այս երկրորդ ներարկումը քանի մը ժամէն թեթեւ reaction մը առաջ կը բերէ որմէ անմիջապէս վերջ հետզհետէ ա'լ տաքութիւնը կատարելապէս կ'իջնէ: Ինչպէս կեղծմաշկի ատեն, անանկ ալ հոս, թիֆօի մը ատեն, որքան ներարկումները շուտ ըլլան՝ ստացուած արդիւնքները այնքան աղէկ կ'ըլլան: Արդիւնքները աւելի որոշ կ'ըլլան, երբ հիւանդութիւն ծագած առաջին հինգ—վեց օրերուն ներարկում ըլլայ:

Ժանտատենդիին դէմ մաքառելու համար մինակ շիճուկի ներարկումը չի բաւէր, կ'ըսէ Պ. Ռէմիլի: Կաղ լոգանքներն ալ պէտք մըն են, որովհետեւ առանց անոնց շիճուկը չի կրնար օգտակար ըլլալ:

Թէպէտեւ ըսողներ գտնուած են թէ՛ «երբ շիճուկ և լոգանք գործածուի, ինչպէս կրնանք ըսել թէ ասոնցմէ որն է բուժիչ յատկութիւն ունեցողը» — ասոր Պ. Շանթմէս կը պատասխանէ, նոյն՝ որ հիւանդը լոգանք ընէ կամ ոչ, տաքութեան աստիճանը ներարկումին եղած օրէն կ'իջնէ: Բայց աւելի արագ կ'իջնէ երբ լոգանք ընէ, և ասոր համար արդէն պէտք է որ լոգանքը զանց չառնուի:

Կը տեսնուի թէ շիճուկը որքա՛ն բարերար ազդեցութիւն մը ունի:

Կ. Տ. ԱԼԼԱՅՎԷՐՏԻ

ԱՂԶԿԱՆ ՄԸ ՕՐԱԳԻՐԵՆ ՔԱՂՈՒՍԾ

Զօրեգաբքի

Շատ մը ուրիշ լուսանկարներու մէջէն, սիրելի Զարուհիս, մի' միայն անորն է որ դէմէս չեմ վերցնէր երբեք, և պատկառանքի, երկիւղածութեան բոլոր թափովս, իբր թէ անիկա սուրբի մը պատկերը ըլլար, երկարօրէն կը դիտեմ. կը զննեմ, կը խորաքննեմ զայն, մինչև որ վերջապէս աչքերս յոգնին և ես իրականութեան դառնամ:

Ահագին մատենադարանի մը ոտքը,

թուղթերով, տետրակներով, ձեռագիրներով, լրագիրներով բռնաւորուած գրասեղանի մը առջև նստած, աչքերը սեւեռուն, բազուկները խաչապինդ, կը խոկայ կամ կ'երազէ:

Վարադոյրին բացած լաֆն ու կոր գիծէն, ինչպէս որ կ'երեւայ, անապատային կիզիչ արև մը, իր ամէնէն յորդ, փրփրուն, խրտղեղեղեղ զանակները կը թափթփէ, անհիւսիս գորգին վրայ, ու անկէ անդին ալ, մինչև իր հասած տեղը: Մշուշոտ բան մը կայ միւս անկիւնին խորը, ճիշտ պատուհանին հակառակ կողմը, ուր սև վերարկուներ պատկառելի շուք մը ձգած ըլլալ կը թուին: Մատենադարանին քովն ի վեր, ձախ դին, սիրուն դարակ մը, ու վրան երկու լուսանկարներ, արմաւենիի երկու չորացած ճիւղերու մէջ առնուած: Այսպիսի Ուրիշ մէկ զարդ, ո'չ մէկ գեղօր:

Մի'շտ կ'երազէ... ինչպէս կը տեսնեմ: Երեւակայութեանս մէջ, անոր դէմքը կը մնայ ճիշդ ա'յնպէս, ինչպէս կ'ուզեմ որ ըլլայ ո՛ր և է վանականի դէմք:

Գուշակեցիր անշուշտ թէ Դուրեան Սըրբազանին ականարկել կուզեմ որ այս օրերս վերջնապէս կը թողու Արմաշի Դպրեմանքը՝ Իզմիր երթալու համար:

Հիցեաբքի

Յօդուածի մը վրայ կը խօսէին:

Կին մը չա՛տ «տափակ» կը գտնէր զայն: Ուրիշ մը «բոլորովին անյաջող» (ճիշդ այս բառերով): Մէկը «գէշ չէ» կ'ըսէր, և չորօրոգ մըն ալ՝ որ «աղուոր» կը գտնէր:

— Ես ասանկ տափակ յօդուածի չէի հանդիպած, կ'ըսէր առաջինը, կին մը՝ որուն գաղափարային զարգացումին վրայ օր մը դեռ տարակուսած չէի մինչև հիմա:

— Կը սխալի՞ք, տիկին, վրայ բերաւ երրորդ խօսակիցը: Ես այնքան տափակ չեմ գտներ: Եւ յետոյ, վերջապէս, այդ յօդուածին տէրը անանկ հեղինակ մըն է որ գէշ բան չարտադրէր:

— Օ՛հ, ատիկա, աւելցուց երկրորդը... Եթէ ամէն բարձր հեղինակի արտադրութիւն բարձր ըլլա՛ր... Տե՛ս, ասոր դէմ կրնամ մաքառիլ...

— Խնդիրը հոն է որ, ընդմիջեց չորրորդը, ամէնքնիդ ալ քեթեւամտութեամբ կը խորհիք այս մասին: Ներեցէ՛ք գործածած բառիս համար: Այդ յօդուածը, կրնամ կրկին անգամ խոստովանիլ, թէ և դուք ազատ էք տարբեր կերպով խորհելու, այդ յօդուածը անոնցմէ է որոնցմէ չա՛տ քիչ անգամ կը հանդիպինք մեր լրագրութեան մէջ:

Ուշադրութեամբ մտիկ ընելէ և համբերելէ վերջը, մտածեցի թէ ակնարկուած գրութեան հեղինակը հո՛ն ըլլալու էր, ուր այս խօսակցութիւնը կ'ըլլար, հետեւելու համար այդ չորս մարդոց կարծիքներուն և հասկնալու համար թէ ո՛ր և է յօդուածի մասին ինչն էր, ի՛նչ հակասական, ի՛նչ անտրամաբանական խօսքեր կ'ըսէին: Իմ մասիս, ընթերցող հասարակութիւնը կը ներկայացնէր չորս հոգիով բաղկացած այդ խումբը, բոլորովին իրարմէ տարբեր ճաշակներով ու տարբեր դատողութիւնով: Ուրո՛ւն ըսածին ականջ տաս, որը վեր կը քաշէ, որը վար: Ապահովաբար հեղինակ մը իր ըմբռնումին, իր դադափարին համեմատ արտադրելու է, եթէ ոչ գլուխ ելլելիք ճամբայ չէ գրականութեան մէջ քալելը: Ու պէտք է գիտնալ որ ասիկա ոչ մէկ արուեստի կը նմանի:

Ուրբաթ

Անանկալ մը եղաւ Դատը—գիւղ գալս, չէ՛: Ասանկ, ժամը տասնին իրիկուան դի, ուշ առնեն, խոստովանէ որ ինծի չէիր սպասեր: Բայց աւելի աղէ՛կ պիտի ըլլար եթէ չգայի, ու Բնրայի մէջ, այսօր ալ, ուրիշ օրերու նման, ընթերցումով և երաժշտութեամբ պարապէի:

Հաղիւ երեք քառորդ տեսնուեցանք իրարու հետ, մենք որ երեք չաբաթ է զիրար չենք տեսած: Ու կարօտս, անհուն կարօտս, որ հետզհետէ իմ մէջս հիւանդութեան մը կը փոխուի, հատցնող կարօտի, որ հեռաւորութեան ու բայակայութեան ցնորեցուցիչ զգայութիւններէն կը ծնի, աւելի՛ բորբոքեցաւ, աւելի՛ անյադ դարձաւ, այդ երեք քառորդի տեսակցութեան միջոցին:

Չէ՛, իրաւ որ, ամէ՛ն բանի մէջ չափաւանցութիւն մը կը մտցնեմ: Արցունքներուս,

ատելութիւններուս, յոյսիս, սէրերուս, յուսահատութեանս, ինքնալիկումիս մէջ իսկ միշտ չափազանցութիւն մը կար, այնպէս որ միջակ կիրք, միջակ զգացում, միջակ տրւայտունք չեմ ճանչնար: Է՛հ, ինչ պիտի ըլլայ ասիկա: Զիրար աղէկ մը ճանչնալէ ետքը, իրարու էութեան, իրարու հոգիի՛ մէջ լուծուելու, ձուլուելու այս գերազոյն, գերմարդկային ճիգով հաւատա՛ որ տանելի բան չէ կեանքը: Ինծի համար սէրը տուտապիլ կը նշանակէ: Զանձրանալէ ալ ձանձրացայ: Ամէն վայրկեան քու քովդ, գտնուելու իղձը կը տոչորէ, կ'այրէ զիս: Այսքան սիրել... օ՛հ, տակաւին չեմ բացատրած զայն, չեմ կրցած արտայայտել, ու պիտի չկրնամ ալ:

Երբ շոգենաւ սուրբ և երբ քու վերջին բարեւ առի հեռուէն, ծովուն վրայ նայող քու պատուհանիդ մէջէն, ինծի տնտնի եկաւ որ ա՛լ չպիտի տեսնեմ քեզի, սիրական Զարուհիս, այնքան զարնուրելի թուեցաւ ինծի վաղը այնքան անվստահելի երեւցաւ ինծի գիշերը: Ի՛նչ գիտնամ, վերջապէս քովդ չեմ:

Ծովուն վրայ, դալկունակ այդ տարածմութեան մէջէն դեռ գրեզ աչքէս չհեռացուցած, սիրտս փռկեցաւ ու լող սկսայ, բո՛ւռն, տառապագին ցնցումով մը, մինչդեռ դուն հեռուէն թաշկինակդ կը տատանէիր օդին մէջ, ու եղբայրս՝ որ Հէլէն վաղարէսգօի մէկ ոտանաւորը կը կարդար Սրամպուլի մէջ, վիճակս տեսնելով, ըսաւ մէկնիմէկ:

Խեղճ ես ի՛նչ ես. ամէ՛ն մարդ զիրար կը սիրէ, բայց ասանկ չընեն: Ամօ՛թ է:

Ո՛վ ինչ կուզէ ըսէ, կը բաւէ որ ես գիտեմ թէ՛ քեզի համա՛ր կուլայի:

Շաբաթ

Ի՛նչ մը տկար եմ այսօր:

Կիրակի

Վաղուն կը ձգեմ գրելիքս:

ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԻՍԵԱՆ

ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՍՆԵՐԸ

(ՆՈՐԱՎԷՐ)

Դ.

Ստուգիւ, Տիրանն էր որ, խորապէս աղ-
դուած այդ կնոջ մոլորեցուցիչ պէրանքներէն,
խենդի պէս սիրահարած էր անոր, երբ անոջի
անգամ, Չատկի առթիւ, ինքն ալ ընկերա-
ցաւ Վահանին՝ այցելութիւն մը տալու հա-
մար։ Այս առաջին տեսութիւնը, սակայն, իր
չարունակութիւնը ունեցաւ ու Տիրան մերթ
բարեկամին հետ և յաճախ առանձին՝ առիթը
չէր փախցնէր տեսնելու Մատլէնը։

Իր ներկայութիւնը՝ այդ տանը մէջ՝ ճա-
ռագայթող ուրախութիւն մը կը բերէր այդ
սիրամոլ աղջկան դէմքին վրայ։ Անոր ու-
զած, երազած տղան էր ան։ Մաքուր, ծրի-
ծրիուն հագուածք մը շարունակ, մատները
աղամանդէ մատնիներով, ու փողկապը շողշո-
ղուն զարդասեղով մը պնտուած, մազերը
իւղի ամենօրեայ օծումով փայլուն ու խա-
մով սանտրուած, բնաւորութեամբ չէնչող ու
զուարթ, և անձնատուր ախարհիկ դուար-
ձութիւններու անխնայ կը վատնէր թառ-
րոններու, պարահանդէսներու մէջ՝ ինչ որ
կըստանար մօրմէն։ Օհ, Մատլէնի իտէալ
ամուսինն էր ան։ Հոգի կուտար վրան։

Ու Տիրանի այս սէրը՝ միակ գաղտնիքն
էր ահա, զոր կը ծածկէր Վահանէն։ Չիկար
բան մը որ ըսած չըլլար անոր։ Անոնց պէս
բարեկամներ՝ դուռուրեք կը գտնուին, Վի-
րաւորանք, պզտիկ գժտութիւններ որ կար-
ծես անխուսափելի են ընդհանրապէս բարեկա-
մութիւններու մէջ՝ գոյութիւն չունէին ա-
նոնց համար։ Երկու անբաժանելիներ, սիրա-
հարներ, եթէ կուղէք։

Տիրան իր սիրուհին՝ իրեն կնութեան կո-
չելու անխախտ որոշումը տուած էր։ Երկու-
քն ալ հաւանած ու սիրած էին զիրար։ Իր
մօրը հաւանութիւնը առնել զիրքին էր. ա-
նկա թէ և անուս՝ բայց սրտի խնդիրներէ
աղէկ հասկեցող կին՝ չպիտի ուզէր արդելք
ըլլալ իրեն՝ սիրածը առնելու համար։ Բայց

կը վախնար պէտք եղած դիմումը ընել ձեռ-
քը խնդրելու համար Մատլէնին։ Դժբաղդ
տղայ. ամէն անգամ որ կերթար այցելու-
թիւն մը տալ անոր, սիրտը կը դողար ի տես
տան տիրոջ խոժոռ դէմքին, որ յայտնապէս
կը ցուցնէր իրմէ չախորժիլը, և հիմա այս
կատաղի սիրոյն հերոսները՝ ժամադրութեամբ
ու գաղտագողի կերպով կը տեսնուէին։

Այս տեսակցութեանց մէջ աղջիկը յայտ-
նեց անոր թէ ինչպէս ծնողքը կը բռնահա-
ն իր վրայ՝ զինքը Վահանին տալու համար,
զոր չէր սիրեր ինք և որ սակայն հօրը պաշ-
տելին էր պարզապէս։ Իր սրտին կաշկան-
դումը, Մատլէն Վահանին վարպետութեանը
կը վերադէր։ Իր բոլոր կասկածը անոր վրայ
էր, այդ գրագրի կատրին, որ իր միամիտ
հօրը համակրանքը գրաւելու ամէն ճիգ թա-
փեր է և հիմա իրեն պէս աղուոր աղջկան մը
հետ կլորիկ հարստութեան մըն ալ տիրանա-
լու կ'աշխատի։ Ինքզինքը անոյ՝ ծախելու,
փնտռել տալու հնարք մը չէր այդ յայտնու-
թիւնը, այլ իր հաստատ համոզումն էր, որ
սակայն մրցում ու ատելութիւն միայն ա-
ռաջ կը բերէ։

Վահանին մասին չըլլած զրոյցը սաստիկ
հանգամանք մը առած՝ կատարուած իրողու-
թեան մը պէս հիմա ամէնուն բերանն էր։
Եւ սակայն օր մը օրանց, ոչ Տիրան իր ճշ-
մարիտ սիրոյն և ոչ ալ Վահանի՝ չըլլած տա-
րածայնութեան վրայ ակնարկութիւն մը ըրին
իրարու։ Ու Տիրան՝ համբերութեամբ, գրեթէ
պաղարիւնով լսեց ինչ որ խօսուեցաւ Վահա-
նին վրայ։ Կըղգար թէ այդ տղան՝ տկար,
անփորձ ու թոյլ հակառակորդ մը ըլլալով
հանդերձ՝ ամէն բան կը ժպտէր իրեն։ Իր
չուրջը ամէն ինչ աննպաստ ըլլալուն հակա-
ռակ, իր պատասխանուած, փոխարինուած
սիրոյն օպաւինելով յաղթանակը իրը նկա-
տելու ապահովութիւնը ունէր։ Մատլէնի
սիրտը իրեն կապուած ըլլալուն հպարտ՝ ան-
վերդով կը սպասէր այն ելքին, որ անորոյ
չէր իրեն համար։ Ու կը ծածկէր միշտ գաղտ-
նիքը սրտին, ինչպէս թաքուն կը պահուի
ամէն ճշմարիտ սէր՝ զոր վայելելու ասպարէզը
անձուկ է, նկատումներու, արգելքներու և
խոչնդոտներու պատճառաւ։

Սիրոյ այս անստոյգ պատերազմը պատճառ մը չեղաւ, ուրեմն, որ Տիրան զայրանար, բորբոքէր, ինչ որ իր հակառակորդի իրաւունքն էր: Ընդհակառակը, իր բարեկամութիւնը հաստատու և անայլայլ պահելու ուխտը ըրած էր կարծես: Ու Վահան բոլորովին զերծ իրեն վերապրուած յանցանքէն՝ անվերդով կը պատասխանէր այդ բարեկամական սիրոյն՝ աւելի անկեղծօրէն, աւելի համարձակ:

Իր միակ հոգը ուրիշ բան մը չէր, բայց եթէ ազատիլ այն անել կացութենէն, որուն մատնուած էր: Իր համոզման վրայ անխախտ՝ սիրային ամուսնութեան մէջ կը փնտռէր երջանկութիւնը: Իր խանգարուած իտէալը, որ տակաւ ցրուելու, անհետանալու վրայ էր, ծայր կուտար նորէն, ճիշդ ինչպէս մարած կարծուած հրդեհ մը, պղտիկ կայծով մը նորէն արծարծիլ կըսկսի:

Ու փորձեց առաջ քշել Մատլէնի հակակրութիւնը իրեն հանդէպ, ինդրելով, պաղատելով որ չի բռնանան անոր սրտին վրայ: Իր նմանօրինակ զգացումները չէր կրնար յայտնել: Վասն զի նախատինք մը պիտի ըլլար պարզտպէս: Անոր ու Տիրանին գաղտնիքէն տնտեղեակ էր. ապա թէ ոչ իր զօրաւոր ու կտրուկ պատճառը պիտի ըլլար մերժելու համար առաջարկը, զոր վարանած էր ընդունիլ իսկոյն: Իր կեանքի պարզ իմաստասիրութիւնը, իր առողջ գաղափարները բաւական չէին սիրահարներուն ներքինը կարգալու համար. այլ ինքն ալ անոնց կեանքը ապրած կամ անառակ մը ըլլալու էր, ինչ որ չէր իրօք: Այդ կեանքին տեսականը, որ վէպի ընթերցումն է, նոր սկսած էր տակաւին: Բայց Տիրան իր թեթեւ ու աննշան գործէն դուրս իր բոլոր ուժը տուած էր սիրային գործերու, որոնց մէջ վարպետ ու խորամանկ ըլլալու յաւակնութիւնը ունէր:

Իր ճիգերը սակայն, անօգուտ մնացին, ըրած առարկութիւնները, փափաքուած արդիւնքը տալէ աւելի իր անձին ազնուութիւնը, հեղուկութիւնը կը ցուցնէին, աւելցնելով իր տիրոջը տենջանքը՝ որ առաջ փեսայ տեսնելու համար զինքը: Այն ճշմարիտ երկիւղով որ յետաձգում մը կամ ժխտական պատասխան

մը, ինչպէս երեւոյթները կը ցուցնէին, պիտի վտանգէր իր փայլուն դիրքը, այլ ևս իր հաւանութիւնը չուսացուց:

Եւ հիմա որ Մատլէն իրը պիտի ըլլար անկասկած, պատճառ մը չի տեսաւ խօսքը չի բանալու բարեկամին:

— Դիտե՛ս, Տիրա՛ն, կը նշանուիմ կոր Մատլէնին հետ:

Լախտի հարուածը չէր աս, այլ բացուած վէրքի մը կոտտանքը:

Ու բան մը չիմացածի պէս՝

— Ի՞նչ կըսես, սքանչելի ընտրութիւն, կը շնորհաւորեմ Վահա՛ն:

Ու ներսէն բոլոր հոգիովը երանի կուտար անոր որ ահա առանց ճիգի, Մատլէնի պէս շնորհաբեղ կնոջ մը կը տիրանար: Կինը զինքը սիրէր թէ ոչ, երջանիկ կը հուշակէր բարեկամը, քանի որ ազատօրէն պիտի վայելէր զայն: Ինքը մինչդեռ հարուստի մը զաւակ, փնտռուած ու գեղեցիկ երիտասարդ՝ կը լքուէր, կը նախատուէր, երբ ուրիշ ընտանիքներ աւելի բարձր և հարուստ՝ կը խնդենային իր վրայ: Վայրկենական տխուր ազդեցութեան մը տակ, պարտուած սիրահարէ մը տարբեր խորհուրդ չէր կրնար սպասուիլ, այս պահուն, բայց տակաւ հանդարտելով, իր սփոփանքը չուտ մը գտածի պէս, հիմնալի քաջութեամբ մը զսպեց իր նախանձն ու զայրոյթը: Տխրութիւնը անհետացաւ իսկոյն ու նախկին զուարթութիւնը վերստացաւ: Ու նորէն չատեց, չանիծեց Վահանը, որ ահա իր ձեռքէն իր սիրուհին կը խլէր. այլ աւելցուց իր բարեկամութիւնը՝ մտերմութեան, խանդաղատանքի հասցնելու աստիճան: Հետաքրքիրներ զարմանքով կը դիտէին զիրենք և ի զուր կը փորձէին իմանալ գաղտնիքը այս շղթայուած բարեկամութեան:

Ե.

Տիրանին տունը հոնդիսաւոր ու պերճ երեւոյթ մը առած էր: Հարսնիքէ մը աւելի ճոխ ու փառաւոր հանդէս մը կար հոն, պարզ նշանախօսութեան մը համար, որ իրենն էր: Ամբողջ Բերա իր վրայ կը խօսէին ու երանի կուտային նշանուածներուն:

Իր ուղածը, հաւանածը զաւակին առնելուն համար, մայրը պարզ գոհունակութեամբ մը

չբաւականացաւ, այլ ծանօթներու, բարեկամներու հետ յողթանակ մը տօնելու պէս փայլուն երեկոյթով մը, բաժակներու բաղխումներու, բազմաթիւ շնորհաւորութեանց և բարեմաղթութեանց մէջ, որոնցմէ իբրեւ ծնողք անմասն չէր ինքը և որոնք քօմբլիմաններէ զուրկ տարէց կիներու այնքան ակորժելի կը թուին, ուզեց ցնծուն և ուրախ տօնել իր հնազանդ զաւկին նշանախօսութիւնը:

Ամուսնոյն մահու ընկն վերջը, իր մէկ աղջիկը ամուսնացուցած էր Եւրոպա, և ինք զաւկին վրձակէն անտեղեակ, ասեմէ մը ի վեր բուռն փափաք մը կը տածէր իր միւս զաւակն ալ կարգելու, ինչ որ ծնողքներուն գլխաւոր փառքերէն մէկը կը կազմէ:

Դեռ Մատլէնի ցանցին մէջ չի բռնուած Տիրան՝ ինքն իսկ կը փափաքէր շտապել իր ամուսնութիւնը, որ զինքը հարուստ պիտի ընէր: Իր նեղ ու հաշիւով, նկատումներով ապրելու եղանակը, տանջանք մըն էր իրեն. որ չէր պատշաճէր իր չուայլ ու առատաձեռն տղու բնաւորութեան: Կարծես վճարեալ ու անփոփոխ ամսականով պաշտօնեայ մըն էր մօրը քովը, քանի որ բան մը չունէր իր անունին:

Բայց, ափսոս, հիմա բան մը չէր երեւար աչքին: Մատլէնն էր իր սրտին ուզածը, որ ուրիշի մը ձեռքը կը պտըտի: Ալ իրեն համար չէր, եթէ աշխարհի ամէնէն գեղեցիկ էակն ալ առնէր: Միայն թէ չը զրկուէր այն փառաւոր ու շահաւոր արարթմանէն՝ զոր ամուսնանալուն իր վրայ պիտի դարձնէր մայրը: Այս էր իր հօրը կտակը, բերանացի ու անվաւեր կտակը, որ երբեմն անվիճելի կտակներէն աւելի զօրաւոր կըլլան:

— Դրամի պէտք չունինք, տղա՛ս, ըսաւ, բաւական է որ շնորհքով աղջիկ մը ըլլայ: Իրաւ ատիկա փնտռել գտնալը հաճելի բեռ մըն է մօր մը համար, բայց կուզեմ որ քու կամքովդ ըլլայ ու վերջը եթէ չյարմարի, չունի՞ծս զիս ինծի պատճառ ըռնելով քու զըժբաղդութեանդ:

— Բնաւ, մայր, քու հաւանածդ իմ ալ ընտրածս է:

Բայց ինչո՞ւ այս տափակ և հին դրութիւնը, զոր զարգացածի հովեր առնող տղայ մը, իր ռափկ բայց ազատամիտ մօրմէն կը պահանջէ: Մի՞ գուցէ իր ա՛ղջկ սիրոյն մէջ, սրբապղծութիւն մը համարի անունը տալ աղջկան մը, որ աւա՛ղ, Մատլէնը չէ:

Ամէն ոք իր հաւանածը կուզէ, կը պահանջէ որ ուրիշէ մըն ալ հաւնուի: Այսպէս գոհ էր այս կինը, որ զաւակը, իր ճաշակին և ընտրութեան վստահելով չէր ուզեր հակառակիլ իրեն: Այս գործին մէջ առարկութիւնները ու կարծիքի տարբերութիւնները շատ անգամ վէճի և զժտութեան կը յանգին: Ու Տիրան կըզգուշանար տեղի տալէ ասոնց, չվտանգելու համար իր հարստութիւնը, որ մօրը կամքէն աւելի քմահաճոյքէն կախուած էր: Անգամ մը մօրը կարծիքը առնել ուզած էր Մատլէնին վրայ, առանց զգացնելու իր համակրութիւնը անոր վրայ: Այս կերպով կուզէր քաջալերութիւն գտնալ մօրմէն և յախուռն ու գռեհիկ միջոցներով միանալ իր սիրուհիին:

— Ես աղ աղջկան չեմ հաւանած, ըսած էր մայրը վճռարար ու տեսակ մը արհամարհանքով:

Ալ ուրիշ անգամ խօսքը չի բացաւ Տիրան:

2.

Դրամի պէտք չունենալին շատ դիւրացուց իրենց գործը: Այս տեսակ հաղուազիւտ նպատակներու համար՝ աղջիկ զաւակներու տէր ընտանիքներ սուր հոտառութիւն մը ունին: Այս պատճառաւ, այս կինը ուր որ երթար մեծ պատիւներու կ'արժանանար, կը պաշտուէր: Աղջիկները չորջը կը թրվուային հաճելի երեւալու համար իրեն: Ճաշի և պտոյտներու հրաւերներ կընդունէր ամէն ատեն, որոնց նպատակը չի հասկնալու չափ միամիտ մը չէր, ու կը վարսնէր ուղղել, իր կարգին, այն խորհրդաւոր հրաւերը որուն անհամբեր կըսպասէին:

Առանց խնդրանքի մատուցում մը արդէն, որչափ ալ յարգի բան մը ըլլայ, դարձեալ տեսակ մը արհամարհանքով կը նայուի: Իր տեսածներուն մէջ, արդարեւ, գեղեցիկ ու պարկեշտ աղջիկներ չէին պակսեր: Բայց ա,

նոնց ծնողքներուն կողմէ իր աչքը խօթելու, վրան նետելու և իրենց վրայէն նետելու անշնորհ ու գռեհիկ ձեւերը, կասկածներ ներշնչելէ աւելի զգուանք կազդէին իրեն:

Իր ճանչցածներէն աղջիկ մը միայն, որ իր չքեղ հպարտութեան մէջ փնտռել տուած էր ինքզինքը՝ Լիւսին էր, այն չքնաղ էակը՝ զոր բնութիւնը իբր գլուխ գործոց ստեղծած է:

Ընտանիքն ալ լաւատես էին իրենց աղջըկան բազդին վրայ և անվրդով կրտսեանն բարձր գնահատում մը Լիւսին գեղեցկութեան համար, որուն վրայ իրենք ալ կը խորխտանային իրաւամբ:

Բայց համեստ ընտանիքի մը զաւակը ըլլալը պատճառ մը չէր որ իր դէմը ելլողին առաջարկը ընդունելու կազմ ու պատրաստ աղջիկ մը ըլլար: Ընդհակառակը, նրբաձաշակ ու դժուարահաճ, ամէն կերպ երջանկութիւն վայելելու արդար իրաւունքը ունէր, ինչպէս ուրիշ մըն ալ իրմով երջանիկ ըլլալու հպարտութիւնը պիտի ունենար:

Իր գեղեցկութեան հարստութիւնը Մատւէնի հարստութենէն շատ աւելի կ'արժէր: Երկնքի գոյն կապոյտ ու թովիչ աչքեր՝ լայն թարթիչներով շողարճակուած՝ իր աղեղ յօնքերուն տակ կը ցոլան: Ճերմակ, շուշանաթոյր այտեր, որոնց վրայ վարդի թեթև գոյն մը կը նշուէ: Իր առատ մազերուն ոսկին՝ իր պզտիկ սիրուն գլխուն վրայ շողափրփու կարծես վառ կը պահէ միշտ իր դէմքը՝ նրբաքանդակ ու ողորկ:

Ու ժպիտը, այն անուշ ու մեղմ ժպիտը, զոր կը սիրենք խորհրդաւոր և խօսուն անուանել, կարծես այլափոխումն է իր գեղեցկութեան՝ զգլխի ընկելու համար դայն: Ոտժուկը՝ զոր իր աչքերը կը զգենուն, բաժանումը իր պզտիկ ամփոփ չրթներուն, զոր երկու շարք մարգարիտներ կը պարզեն, ուրիշ գեղ մը չէ՝ որ ի յայտ կը բերեն իր չնորհալի անձին վրայ:

Պարզասիրութիւնը իրեն համար չէր ընտել: Աննշմար անցնելու վախն էր թէ սրտեր վառելու տենջը, որ Լիւսի չափ ճոխութեան մը անձնատուր՝ գիտէր չքեղօրէն պարուրել իր թափանցիկ ու գեղեցկաշէն մարմինը, զոր պզտիկ տէքօթէի մը բացուածքովը կը ցուցադրէր:

Իր խօլ պերճանքին հասնելու համար, ուրեմն, բարեկեցիկ երիտասարդի մը պիտոճէն շատ վտիտ պիտի գար և ճիշդ ասոր համար հարուստներու աչք ունէր աւելի: Բայց անոնցմէ ոչ ոք ուզեց տիրանալ այդ քսան տարու շնորհալի էակին:

Անոնք, հարուստները, այդ գեղեցկութեան հետ, դրամօժիտ ալ կը պահանջէին: Ու միջակ դասակարգէ քանիններ զինքը տեսնելուն՝ պաշտելու աստիճան սիրած ու ձեռքը խնդրած էին: Բայց Լիւսի մեղքնալով՝ գրեթէ գթալով մերժած էր այդ երիտասարդներուն առաջարկութիւնները, որոնք մէյ մէկ աղաչանքներ էին պարզապէս: Անոնց միակ թերութիւնը հարուստ չըլլալնն էր ու Լիւսի՝ անոնցմէ աւելի խոհեմ ու խելացի, աչքի առջև կը բերէր իրենց կործանումը և անոր հետեւող սիրոյ քայքայումը՝ իր չափալութեան երեսէն, որ իր միակ յանցանքը ըլլալով հանդերձ՝ իր գեղեցկութեան ալ լրումն էր:

Այո՛, հարուստի մը կի՛ր ըլլալ. այս էր իր ըզձանքը: Ու քանի որ երիտասարդ հարուստ մը չէր գոհանար իր արժանիքովը, փոյթը չէր որ ծեր մը ըլլար ամուսինը ու չը սիրէր դայն: Բայց և այնպէս, բան մը չի պակսէր իր հրապոյրէն ու աւելնար ալ:

Որո՞ւ համար արդեօք:

ՄԻՆԵՐԱՆ ԴԱԻԹԵԱՆ

(Շարունակելի)

ԵՐԶԱՐԵՐԱԿԱՆ

Տ.

Պատիւ ունիմ ծանուցանել Ձեզ քե «ՖէնիֆՍ Օթիֆիէն» Հրդեհի եւ Կեանքի Ապահովագրական Ընկերութեան Իզմիթի գործակալութիւնը ի ստորեւ նշանակեալ բուականեմ սկսեալ

ԱՔՐԱՀԱՄ ԷՅ. Կ. ԿՏԱԻՃԵԱՆԻ յանձնած եմ:

Այս առթիւ կը փութամ ծանուցանել նաեւ քե Իզմիթի եւ Երզակայ գիւղօրէից համար մեր ՄԻԱԿ Գերկայացուցիչն է յիշեալ Էֆենիքն, եւ քե Իզմիթի մեզ իմէ գաւ ոչ ոք իրաւունք ունի գործակալ, քննիչ եւ ուրիշ ո եւ քե անուամբ մեր Ընկերութեանց հաւուոյն գործելու կամ բանակցելու:

Կ. Պոլիս, 10 Սեպտ. 1904

Լիւզօր Գերկայացուցիչ

Գ. ՖԵՐԱՏԵԱՆ

Հիմնադիր - Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ
Տէր եւ Տնօրէն—ՏՈՒՔԹ. ԵՐՈՒԱՐԴ ՄԱՅԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼԻՔ Օրագրի

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1841 ԻՆ

ԿԸ ԳՈՐԾԷ ՖՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՊԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒՆ ՏԱԿ

Ակիզբէն ի վեր ապահովագրելներու եղած վնասում 300 միլիոն ճր.

Սկզբեն ի վեր արձանագրեալ սպանովագրութիւնք 700 միլիոն ճր.

ԸՆԹԱՑԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԶՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ 62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահեստի համեմատու-
թիւնն է 74⁰/₁₀₀ որով ՔԵՍ ԲՄԴԵՆԵԼԻԼԻ ընծայած երաշխաւորութիւնը գեր ի վեր կը
հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց տաւած երաշխաւորութենէն:

Ընկերություն Վարչական կորպորացիա Կաշույն է Գրանցումի ամենէն նշանակար
դրամադրներէն, ինչպէս

Գ. ՌԷՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Զբանսասիր երկաթուղեաց ընկերութեան եւ Քրէտի Նիօնէի Վարչական Խորհրդոյ անդամ.

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՅԼԵՌԻ, Դրանապիւնդիք ընկերութեան Վարչական Խորհրդոյ անդամ.

Մ. ԿՈՄՍՍՍՈՎՍԿԻՆԻ ԿԻՆՈՄԱՏԵՐԻ ՆԱԽԱԿԻՆԻ ԴՐՈՒՄԸ:

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Բրէտի Լիօնէի.

Թուրքիայի Տնօրեն Գ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

ՊԵՐԻՍ, ՍԵՐԵՆ-ՀԱՄԱՏ, ԲԱՍՏԻ ԲԵՐՐԵՐՈՂՈՒ

Ընկերութեան վրայ տեղեկութիւն առնելու համար դիմել Քրէտի Լիօնէի:

ԾԱՆՈԹ. — Շահաւոր դիրք պիտի տրուի այն բնօրինակն, որ կարելու արդիւնք մը ի-
րագործած ըլլալ աճանայն:

(Dr. Antoniadis)

Մասնագէտ ծածուկ եւ մորթալիճ ախտերու

Բերա, Սերգիս փողոց, Թ. 20

(Անգլիական դեսպանատան մօտ)

Վկայեալ Վրէննայի Համալսարանէն ուր ուսած է տասներեկ տարի, միեւնոյն տառն իբր օգնական — բժիշկ ծառայած ըլլալով Բթօք. Նումամերի, Քարօսիի եւ Տիֆֆլիզի գաղտնի հիւանդութեանց յատուկ քիմիք. ներու մէջ:

Միակ ծածուկ հիւանդութիւններէ եւ
յորթային տխրաբէ տառապողները կ'ընդունի
զօրն կը բռնէ նորագոյն եւ կատարելա-
գործեալ մէթոտներու համաձայն: Իր մաս-
նագիտութենէն դուրս օրեւէ հիւանդ չըն-
դունիր:

Գ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՐ ՓՈԴՈՅ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիսէին դ'մ

ԳԵ. ԵՇ. ՇԲ. օրերը անաւօտեան կանու-

ԽԱՔՆ ԱՐՈՒՆԵԼ ԻՐԻԿՈՒՆԱՆ Ժ. 11 1/2

ԲԵ. ՔԵ. Ուր. օրերը ճեմ մինչեւ 11½

Կիրակի օրերը ժամագրութեամբ 4-10



ՌՕՍԻԱ - ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՍՏՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուժազույ արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿԱՐԿԱՍՏՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱԿՈՎ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՍՏՆԵՐՈՒՆ ԴԷՄ, Ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿԱՐԱԵԼՈՆ ԴԷՄ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած 10,666,667 Փրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան 142,585,000 *

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա

գլուխ եւ վնասուց հատուցում 314,768,000 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագին եւ տոկոս 56,585,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա, 1-10

ՑԱՄԱՔԱՅԻՆ ԵԻՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՀ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԳՐԷ

Ունի կեանքի, օժիտի, արկածի, ցմահ թուակի նիւղեր

VICTORIA ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ Կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛

DE Բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց բժշկական քննութեան

BERLIN Առանց բժշկական քննութեան եղած Կեանքի ապահովագրութիւններ, որուն վճարումները չաթաթական մասնավճարներով տեղի կ'ունենան,

սկսեալ 5 դրուէն

Ապահովագրեալ գումար 1902ին Ծր. 1,244,457,577

Պահեստի դրամ 1902ին 451,284,214

Հաստատուած 1853 սեպտ. 20ին ար-
հայտահանրովարտակով եւ ուղղակի
կառավարութեան հսկողութեան ներ-
քէ:

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայս Պանքա

Սթամբուլ Բրէտի Լիոնէ

Լիազոր Ընդհ. Ներկայացուցիչ
ՄԻՀՐԱՆ ՄԻՆԷՄ ԳԱԼՅԱՅԵԱՆ

Տեսուչ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԵԶԵՃԵԱՆ

Պոլիս Քաթրերբողլու խան

թիւ 45 եւ 45 Բ.

1-10

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎՈՐԱԿԱՆ ԸՆԿ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագումար երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագումար	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Ց Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագումար եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՐԻՆ ՆՄԱՆԸ ԿԱՐՆԵԼԻ ԶԵ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակագոյց՝ գեղջեալ գիւղերով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրուողք ԶԵՐՄ են այն վնասներէն եւ յուսախաբանութիւններէն, որոնց կենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՐԻ ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապառով ազգաբուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԳԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի ՏՅՈՒՆԴՈՒՍԻՆ

Պոլիս, Սուլթան Համամ, Բասամ Քաթրըք Օղլու

Մասնաձեւը՝ Ղալաթիա, Ինայէթ Խան: Դործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

(BILBOUR)



ՅՈՎԱԹՔ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱԲՈՅԻ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դեպտանտան

Իքեա, Մեծ Փողոց, Բազմիմ, քիւ 16

Զրաւեան արաւքման

Պալպալեան ամէն օր ակոյայի ամէն տեաակ հիւանդութիւններով տառապողներ, կ'ընդունի. իսկ Ուրբաթ, կիրակի եւ երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան օր եւ է ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու չինած ակոյաները: Յորեկները ակոյայ քաշել տալու համար որոշ վարձք մը կ'առնէ. քաշել տուողին կամքէն կ'ախեալ է: Վկայեալ տառամարտէի Տիկին Բօլին եւս կը գանուի միշտ նոյն դարձանքաւան մէջ: Աղփասներուն ձեռք 1-10

ԶԱՐԵՀ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԻ—ԱՏԱՄՆԱԲՈՅԻ

Վ Կ Ա Ց Ե Ա Լ

ԼԻՐՆԻ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԷՆ

ԵՂ

ՊԱՇՏՈՒՆ ԺԸՆՎԻ ԲՅԵՎԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԷՆ
Կը բուժէ ակոյի մէջ տեսակ ցաւեր եւ լինտերու հիւանդութիւններ, կատարելագործեալ փութի մեքերով: Հիւանդ կ'ընդունի ամէն օր, Բեքա, Մեծ Փողոց ԲՐԷՏԻ ԼԻՐՆԻ ՂԻՄԱՅԸ Կ'աւանդի փողոց թիւ 2:
Երեքշաբթի եւ Ուրբաթ օրերը մինչեւ ցորեկ աղքատաց ակոյայ քաշելը ձեռք է:

ԳԵՂԱՐԱՆ ԽԱՉԻԿՖԷՍՃԵԱՆ

Կ. Պօլիս, Մահմուտ Փաշա Պաշի, Ապուս ԷՖ.ի խանին դեմ 261

Սոյն բողոքման, դեղարանը, այս առաջինը կաղամկերպութենէ մը ետքը, իսկական փետրուարի կողմանէ, քիչ ատենուան մէջ պատուէր ունեցաւ գնահատուիլ որդոյ հասարակութեան: Եւ որմէ քաջաբերուելով պէտքը կըզգայ իրեն ազդուութիւնը եւ նպատակը ներկայացնել հաճութեան:

ՆՊԱՏԱԿ.— Գոհ ձգել իր յաճախողները միշտ դեղերու թարմութեամբ, դեղագրութեամբ եւ ճշդապահ պատրաստութեամբ, գնելու չափաւորութեամբ եւ արուեստին խղճամբ գործողութեամբ:

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ.— Մաքրութիւն, ապակեխման դրութիւն եւ պարկեշտութիւն դեղարանին սկզբունք եղած են:

Եւրոպական տան մը հետ բանակցած ըլլալով՝ ամէն շաբթու պատգամաւ թարմ քիւպեր (աքր գալիմի) կը հասնին բողոքող, Բացի սակէ, կը գտնուի օսմանեան, եւ եւրոպական նոր եւ միշտ թարմ դեղեր եւ մասնադեղեր, ի մէջ այլոց Մալակայի եւ Պորթօյի գինիներ, տեղական եւ Եւրոպական ամէն տեսակ թարմ հանքային ջուրեր, Գոլօնեայի եւ Բաքրանի ջուրերու ալ խառն տեսակները եւայլն, իսկ միջառաքան փոշիին ամէնէն ազդեցիկ տեսակէն միշտ պատրաստ կը գտնուի:

Սակայն օր Դեղարան յաճախող Հայ եւ օտարազգի բժիշկներէն յիշենք մասնաւորաբար հանրածանօթ Բժիշկ ԱԼԼԱՀԱԷԴՏԻ ԷՖ. որ ամէն Գ. Ե. Շ. օրեր ժամը 8—11 իրեն դիմող հիւանդները կը դարմանէ իրեն ծանօթ փորձառութեամբ եւ մասնագիտութեամբ, դեղարանին մասնաւոր դարմանարանը: Դեղարանը ունի նաեւ ԳԻՇԵՐԱԹԻՆ ՍՊԱՍ 8—10

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Տօքթ. Բ. Էմիրզէ, որ իր բժշկական ուսումը կատարելագործած է Բարիզի մէջ եւ 15 տարիէ ի վեր մեծ փորձառութիւն չհաճ է, այժմ հաստատուած է, Բերք Պէոյիւք Բարմաք Գորու, Թիւ 16: Մասնագէտ է մանկաբարձութեան եւ կանացի հիւանդութեանց եւ առանց մէ զոտ նորա. գոյն մեթոտներով կը բուժէ ջղային ու հագեկան ամէն կարգի հիւանդութիւններ ինչպէս նաեւ արգանդախցում (hystérie) առաջ եկած հիւանդութիւնները, մասնաւորապէս անդամալուծութիւն եւ կարկամութիւն եւայլն: Ասկէ զատ ասկորի եւ փոքրական խոլը (սերածա), առանց գործողութեան՝ նոր դրութեամբ մը կը դարմանէ, տեղը առանց յայտնի ընելու: Տօքթ. Էմիրզէ էՖ. կը գտնուի, Բերք Պէոյիւք Բարմաք Գորու, Թիւ 16 տան մէջ, ուր կիրական է զոտ ամէն օր կեսօրէն յետոյ ժամը 1էն մինչեւ 4 (Ը.Յ.) հիւանդ կ'ըն. դունի, եւ ուրբաթ օրերն ալ ձրաբար ըկ դարմանէ հիւանդները:

2—10

ՏՈՔԹ. ԲՈՐԹՈՒԳԱԼԻՍ

(Dr. Portucalis)

Նախկին ուսուցիչ Կ. Պօլսոյ կայս. Բժշկական վարժարանին, անդամ Բարիզի Բժշկական համաժողովին: Մասնագէտ արանց եւ կանանց ծննդական գործարան. ներու հիւանդութեանց: Պաշտոյ վկայագիր ունի Պէրլիւնի, Լանտի, Բեշթայի եւ ուրիշ երկիրներու Ակադ. միներէն: Հնարիչ բժշկական գործիքներու եւ հեղինակի մասնագիտութեան վերաբերեալ գործերու: Հիւանդ կ'ընդունի՝ Պօլսոյ կողմը կամուրջին դէմի անկիւնը, իր դարմանատան մէջ, ամէն օր կէսօրէն մինչեւ իրիկուն. իսկ Բերք, Թաքսիմ, Ֆրանսական հիւանդանոցին դէմ ամէն օր առաւօտէն մինչեւ կէս օր եւ իրիկուն ժամ 6 էն 9 (Ը. Ե.):

2—10